

ՀԱՅԿԱՆ ՍՈՒՐ Ք  
ԳԻՏՈՎԱՅՈՒԹԻՒՆ ՄԱԿԱՐ

ԳԻՏԿԱՆ ՊՐՈՊՐԵՎԱՆԴԱՆ  
ԽՈՐՀՈՒՐԴ

ՃՐԱՐԴԱ  
ՃԱՐԺԻ ԲՈՒԺ  
ՎՐԱ ՃՐԱՐԴԱ  
ՃՐԱՐԴԱ ՃՐԱՐԴԱ  
Ի ԿՐԱՐԴԱ

Ա. Լ. ԹԱՅՏԱՋՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈՒԺՈՒԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

ՀԱՅՈՒ ԳԻՏՈՎԱՅՈՒԹԻՒՆ ԱԿՈԴԵՄԻԱՆ ՀԱՅԱՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

1946

581.9(47.925) 8642.

10-16 Рибакиадж  
Запись

2 м.

659

159

ՀՍՍԲ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ԳԻՏԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԱՑԻ ԽՈՐՀՈՒՐԴ

581.9(4) 925

թ-16

Ա. Լ. ԹԱԽՏԱԳՅԱՆ

ԽՍՀԳԳԸ է 1961

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԲՈՒԺԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

A <sup>7</sup>/<sub>16244</sub>  
~~8642~~

ՀՍՍԲ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ ՀՐԱՄԱԿԱԳՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

1946

Տպագրված է Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի  
Նախագահության կարգադրությամբ

Պատասխանատու Խմբագիր՝  
Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ,  
Գիտական պրոպագանդայի խորհրդի նախագահ՝  
**Ս. Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

А. Л. ТАХТАДЖЯН  
РАСТИТЕЛЬНЫЙ МИР  
АРМЕНИИ

(На армянском языке)  
Изд. АН Арм. ССР,  
Ереван, 1946

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայտնի հայ պատմաբան ու րանաստեղծ Ղեոնդ Ալիշանը Հայաստանն անվանել է հակադրությունների երկիր։ Հակադրությունները նկատվում են այստեղ ամեն բանում՝ թե՛ մակերես վույթի կազմության, թե՛ կլիմայի, թե՛ կենդանական աշխարհի, թե՛ հողերի նկատմամբ և այլն։ Բայց այստեղ առանձնապես սուր են արտահայտված բուսական աշխարհի հակադրությունները։ Հայաստանի բուսական ծածկույթն աչքի է ընկնում տիպերի բացառիկ բաղմազանությամբ, ծայր աստիճանի խայտաբղետությամբ։ Այդտեղ երբեմն մի քանի տասնյակ կիլոմետր տարածության վրա իրար հաջորդում են շոգ ու ցամաք անապատներն ու կիսաանապատները, ստեպները, անտառները և ալպիական բաղմերանդ «գորգերը»։ Հայաստանի բուսականության այդ բաղմազանությունը բացատրվում է երկրի մակերեսույթի շատ բարդ կազմությամբ, առանձին ուայոնների կիմաների մեծ տարբերություններով և, վերջապես, նրանով, որ ուսուլութեալայի տեսքության գտնվում է երկու իրարից շատ տարբեր ֆլորիստիկ պրովինցիաների։ Կովկասյան մեզոֆիլ և Արմենականական քսերոփիլ պրովինցիաների շվամն վայրում։

Հայաստանի բուսական աշխարհը միշտ էլ այնպիսին չի եղել, ինչպիսին այժմ է։ Երկրի գեղուգիական երկարատև պատմության ընթացքում նրա ֆլորան շատ անդամ է արժատապես փոխվել։ Երկրի տերիտորիան մի անդամ չէ որ ծովի տակ, է անցել, և այդ ժամանակ նրա ցամաքային բուսականությունը բոլորովին անհետացել է։ Իսկ երբ ծովը նորից տեղի է տվել, ջրից աղատված տարածությունը ծածկվել է նոր՝ գրանից առաջեղածից տարբեր բուսականությամբ։

Գեղուգիական հնագույն ժամանակն երում այդտեղ տրոպի-

կոկան և ապա սուբտրոպիկական բուսականությունն է աճել, որն անհետացել է մեզնից միայն մոտ կես միլիոն տարի առաջ: Սուբտավորապես կես միլիոն տարի առաջ Հայաստանի, ինչպես և ամբողջ կովկասի, կլիմայի մեջ խիստ ցրտացում է տեղի ունեցել որի հետևանքով ջերմասեր և խոնավասեր մշտադալար ծառերն ու թփերը ոչնչացել են: Դա այսպես կոչված «սառցադաշտային ժամանակաշրջանն» էր, երբ երկրի կլիման խիստ ցամաքային էր գարձել և երբ իրար հաջորդող ցուրտ ու խոնավ և շոր ու ցամաք կլիմաների ժամանակաշրջանները խիստ փոխել են երկրի բուսականությունը: Սուբտրոպիկական մշտադալար անտառների փոխարեն առաջացել են տերևաթափ անտառներ, որոնց մեջ տիբապետող են եղել հաճարին, կաղնին և այլ ցրտադիմացկուն տեսակները: Երկերը ծածկվել է այժմ յան տիպի բուսականությամբ:

Հայաստանի բուսականությունը հետառցադաշտային ժամանակ և անփոփոխ չի մնացել: Կլիմայի փոփոխությունների, իսկ հետագայում ավելի մեծ չափով նաև մարդու գործունեության ազդեցության շնորհիվ միշտ փոխվել է երկրի բուսական աշխարհը: Մարդու իր պատմության ընթացքում ամենաուժեղ կերպով ներգործել է Հայաստանի բուսական աշխարհի վրա: Հայաստանի տերիտորիան հաղարամյակների ընթացքում մարդու տնտեսական, ինչպես և ավելիչ գործունեության ասպարեզ է եղել: Այդ ամբողջ ժամանակ մարդը անխնա կերպով ոչնչացրել է անտառները, փոխել է մարդագետինների և ստեպների տեսքը, մեծ տարածությունների վրա վարել է հողերը և այսպիսով չափազանց ուժեղ ներգործություն է ունեցել երկրի ընական բուսականության վրա: Մարդու թե կուլտուրական և թե ավերիչ գործունեության ուղղակի և անուղղակի ազդեցության տակ այնքան խիստ է փոխվել հիմնական բուսականությունը, որ նրա նախկին պատկերի վերականգնումը բուսաբանի համար հաճախ շատ դժվարին և բարդ գործ է:

Հայաստանի բուսականության տիպերի աշխարհագրական բաշխումը տեղի է ունեցել ուղղաձիգ զոնայականության սկզբունքով: Ամենացածր դիրք ունեն անապատները, ամենաբարձր տեղերը գրավում է ալպիական բուսականությունը, նրանց միջև դասավրագիր է ալպիական բուսականությունը, անտառները և բու-

սականության մյուս տիպերը: Պատահական չէ, որ հոչակավոր քրանտիացի բուսաբան Տուրնեֆորը ուղղաձիգ զրնայականության սկզբունքն առաջին անգամ Հայաստանում՝ Մասիս լեռան վրա է հայտաբերել նախանցյալ դարի սկզբներում:

## 1. ԱՆԱՊԱՏՆԵՐ

Բուն անապատային բուսականությունը Հայաստանում շատ քիչ տարածություն է գրավում: Միջին Ասիայի և Իրանի ընդարձակ անապատների փոխարեն Հայաստանում կան անապատային բուսականության միայն համեմատաբար փոքր կղզիներ կամ հատվածներ: Անապատի այդ հատվածները կապված են Միջին Արաքսի հովտի կամ Արարատյան դաշտի աղոտ ավագային, գիպային և կավային հողերի հետ:

Ամենից շատ տարածված է հալոփիլ (աղասեր) անապատային բուսականությանը: Հալոփիլ անապատի հատվածները շատ բնորոշ են Արարատյան դաշտի ալուվիալ տարածությունների համար: Այդտեղի հողերը հարուստ են քլորի և ծծմբաթթվի աղերով, ըստ որում բոլոր անցումները կան սկսած թույլ աղոտ հողերից մինչև իսկական աղուտները: Այդ պայմաններում հաջողությամբ կարող են աճել միայն այն բույսերը, որոնք հատկապես հարաւարված են հողի մեջ մեծաքանակ աղերի պարունակությանը: Այդ բույսերը կոչվում են հալոփիտներ կամ աղադիմացկուն բույսեր: Հողի մեջ եղած մեծաքանակ աղերը հալոփիտների համար թունավոր կամ ընդհանրապես վնասակար չեն, ինչպես բաղմաթիվ մյուս բույսերի համար: Հալոփիտներն իրենց արտաքին հատկանիշներով շատ բնորոշ են և մեծ մասամբ մալի, սուկուլենտ են լինում: Բացի արտաքին առանձնահատկություններից հալոփիտները մի շարք անսատոմիական և ֆիզիոլոգիական հատկություններ ել ունեն: Դրանց ամենաբնորոշ առանձնահատկությունները մեկն այն է, որ բջջահյութը մեծ կոնցենտրացիա և բարձր օսմոտիկ ճնշում ունի, մի բան, որ կապված է հողային լուծույթների բարձր կոնցենտրացիայի հետ: Հալոփիտներն աղոտ հողերի համար լավ ցուցիչներ (ինտիկատորներ) են:

Հալոփիլ անապատային բուսականության տարածության մեծապույն մասը զբաղված է օշաններով (շորաններով): Օշան-

յին անապատի տիրապետող բույսեր հանդիսացող օշանմերից կարելի է նշել երկու ամենից հաճախ հանդիպողները՝ հավամըր-գանման օշան (Salsola ericoides) և ծառանման օշան (Salsola dendroides):

Հավամըրգանման օշանը տարածված է իրստ աղոտ հողերում և նույնիսկ չոր աղուտներում: Շատ սովորական են այդ տնօսակի զուգակցությունները այլ հալոֆիլ բույսերի հետ: Շատ հաճախ նա հանդիպում է նաև օշինդրի հետ խառը խմբավորումներով: Հավամըրգանման օշանը եջմիածնից դեպի հյուսիս-արևմուտք և զոկտեմբերյանի մոտ համարյա մաքուր բուսուտներ է կազմում բարձրանալով մինչև օշինդրի կիսաանապատի գոտին և տեղ-տեղ առաջացնելով օշինդրի հետ խառը բավականին մեծ խմբավորումներ:

Միջին Արաքսի հովտում շատ ավելի տարածված են ծառանման օշանի խմբավորումները: Դրանք զարգանում են թույլ աղոտ հողերում՝ Արաքսի երկարությամբ լայն շերտով, անմիջապես գետի վարարահունի հետեւում: Ծառանման օշանը՝ օշանի մյուս տեսակների համեմատությամբ ամենից շատ է կապված ամենաթույլ՝ աղոտ հողերի հետ: ոռոգվելու գեպքում այս հողերը միանգամայն պիտանի են զյուղատնտեսական մշակույթների համար: Ծառանման օշանը հանդես է գալիս թե մաքուր բուսուտներով և թե այլ տեսակների հետ խառը: Շատ հաճախ նա հանդիպում է օշինդրի, պարարտ օշանի և մանավանդ ուղարկություններ:

Միջին Արաքսի հովտի ամենացածր տեղերը զբաղված են աղուտային և ջրասեր բուսականությամբ:

Աղուտները մեծ տարածման են համնում եջմիածնի շըրջանում և Արագայանի հարթության վրա: Ըստ աղերի տեսակների Հայաստանի աղուտները պատկանում են սուլֆատ-քրոքիդային և քլորա-սուլֆատային տիպերին: Այստեղ շատ սովորական են փըմփուշտ աղուտները, որոնք միկրոռելեֆի բարձրմասերում են գտնվում:

Քանի որ ստորերկրյա ջրերը աղուտներում մոտ են գտընվում մակերեսին, այդ պատճառով ելայգտեղ նույնիսկ ամառը մեծ խոնավություն է նկատվում: Դրա հետեւնքով սովորաբար դրանց վերին շերտերը խիստ աղոտ են: Արքան աղուտը բարձր

Է գտնվում, այնքան ստորերկրյա ջրերի մակարդակն ավելի ցածը է և այնքան ավելի հեշտ է վերևից լվացվում ու աղաղըրկվում: Ստորերկրյա ջրերի իջեցանը զուգընթաց աղուտային բռնյակի աճման պայմաններն էլ խիստ փոխվում են և դրան համապատասխան փոխվում է նաև բուսականության բնույթը:

Ամենից աղակայուն տեսակները կազմած են խոնավազուա հողերի հետ՝ հանդիպելով աղուտաների ցածը մասերում: Ամենախոնավ տեսակի վրմգուշա աղուտաների այն մասերում, որտեղ հողը ջրով շատ հարուստ է կամ հազեցած է, հանդիպում են բալախի (Salicornia herbacea) համարյա մաքուր խմբավորումներ: Բալախը մի մասի միամյա աղաբույս է խիստ զարգացած ջրատար հյուսվածքով և ինչպես իրար, այնպիս և ցողունի հետ սերտաճած տերևներով: Նա հանդիսանում է դեպի ավելի ուժեղ աղուվածության ուղղությամբ զարգացող բուսականության ռահվիրա, և այդ պատճառով էլ նրա բուսուաները աղուտային բռնսկանության էկորոգիական շարքում առաջին տեղն են գրավում: Հայտնատանում բալախի բուսուաները չնչին են և միայն Արաքսի ափին՝ Արագդայանի գաշտում են հանդիպում:

Մի փոքր պակաս խոնավ և ավելի ուժեղ աղուված վրմգուշա աղուտաներում հանդիպում են սարսագանի (Halocnemum strobilaceum) խմբավորումներ: Այդ բույսը նույնակես հողերի աղայնացման ռահվիրա է հանդիսանում: Սարսագանը մսալի կիսաթուփ աղաբույս է, որի տերևները իրար և ցողունի հետ սերտաճելով՝ ամբողջական, զլանաձև ընձյուղիատված են կազմում, նման բալախի ընձյուղին: Այդ սերտաճման շնորհիվ գորոշիացնող մակերեսը խիստ կրծատվում է: Բալախի նման սարսագանն իր վեգետատիվ օրգաններում հսկայական քանակությամբ նատրիումի դյուքտալույծ քլորային և ծծմբաթթվական աղեր է կուտակում, որոնք շատ բարձր օսմոտիկ ճնշում են ստեղծում: Բարձր օսմոտիկ ճնշումը ոչ միայն տվյալ բույսն ընդունակ է դարձնում իր գոյությունը պահպանելու խիստ աղուսիորդում, այլև նրան մեծ կայունությունն է հաղորդում արեի տաքության և օդի չորության հանդեպ: Հետաքրքրական է, որ ըստ կելլերի փորձերի հենց այդ բույսերի համար է, որ որոշ նշանակալի աղուտությունը [նատրիում քլորիդի  $1-20\%$ ] կամ նատրիում սուլֆատի համապատասխան քանակության ջրային լուծույթ]

հզոր աղղակ է հանդիսանում դրանց ավելի փարթամ աճման և զարգացման համար։ Ավելի ուժեղ աղոտությունը թուլացնում է աճումը, բայց խիստ բարձրացնում է ներքին օսմոտիկ ճնշումը։ Բարձր օսմոտիկ ճնշումը և տերևների իրար ու ցողունի հետ սերտաճումը, ինչպիսի բալախի, նույնպիս և սարսազմանի միակ հարմարանքներն են մեծ գոլորշիացման դեմ։ Դրանց տերևները գուրիկն անառաջական սովորական հարմարանքներից՝ կուտիկուլան բարակ է, հերձանցքները բաց են և խորասուզված չեն, մաշկի վրա պաշտպանողական մազիկներ չկան։ Արաքսի միջին հովտում սարսազմանը ցածր տեղերում սովորաբար մաքուր խմբավորումներ է կազմում, որոնց մեջ միայն եղակի օրինակներով հանդիպում են այլ աղասիեր տեսակներ։ Հողի ծածկվածությունն այդտեղ սոտավորապիս 25 տոկոս է։

Այս տեղերում, որտեղ սարսազմանը թույլագոտ հողերում է աճում, նրան միանում են մի շարք պակաս աղասիեր բույսեր։ Այդ տեղերի համար առանձնապես ընորոշ է կարճիկ կոճղարմատավոր աղակայուն ցորենազգի բույս որդանխոտը (*Aeluro-pus littoralis*)։ Այդտեղի հողի ծածկվածությունը հաճախ 35 տոկոսի է համանում։

Ավելի լայն սահմաններում է հարմարվում աղահասկիկը (*Halostachys caspica*), որը խիստ ճյուղավոր թուփ է՝ համարյա տերևազուրկ։ Դրա միամյա ընձյուղները հյութալի են, գլանաձև, չափածագոր, իրար հետ սերտաճած թեփանման տերևներով։ Նա աճում է թե խոնավ և թե չոր աղուտներում և գերադասում է խիստ աղոտ հողերը, թեև ոչ այն աստիճանի, ինչպիս սարսազմանը։ Նա հանդիպում է նաև կարմրանի (*Tamarix*) և հղեղի (*Phragmites*) հետ։

Մի փոքր ավելի բարձր տեղերում հանդիպում են աղուտներ սուվեդի զանազան տեսակներով (*Suaeda splendens* և *Suaeda altissima*)։ Ի տարբերություն բալախանմաններից՝ սուվեդների տերևներն աղատ են մնում և իրար ու ցողունի հետ չեն սերտաճում։

Այս տեղերում, որտեղ ստորելրլյա ջրերը ավելի խորն են գտնվում և հողն էլ ավելի քիչ աղեր է պարունակում, մենք այլ բուսականություն ենք տեսնում, որ կազմված է ուրիշ կենսական ձեւերից։ Ստորելրլյա ջրերի իջեցմանը զուգընթաց աիրա-

պետող բույսերն ընդհանուր առմամբ դառնում են պակաս մստվի, իսկ զրանց տերեների մաշկի մեջ հանդես են գալիք ավել լորդ գոլորշիացումից պաշտպանող անսատոմիական հարմարանքներ: Բույսերի քիմիզմի մեջ ևս փոփոխություններ են նկատվում: Այդ տեսակետից ուշագրավ է ամենից առաջ սոդային աղուտների բուսականությունը:

Յոզային աղուտներում, որոնք տարածված են Արարատ (Դավարու) ավանից գեպի արենելք և եղջիւղորի շրջակայքում, առաջանում են խմբավորություններ՝ ելունդավոր թալի (Atriplex verrucifera) գերակշռությամբ: Այդ բույսի տերեները արծաթաղուն են, որովհետև ծածկված են խորոր, բշտկաճն, չըով լի մաղիկներով, իսկ մաշկը երկշերտ է՝ կազմված հաստապատ բջիջներից, և հերձանցները խորասուզված են: Թալի տերեները դեռևս շատ նատրիում քլորիդ են պարունակում:

Է՛լ ագելի բարձր տեղերում հանդիպում են աղուտներ, որոնց տիբապետող բույսը Լեսինզի քափուրախոտն է (Camphorosma Lessingii): Քափուրախոտը մսալի չէ և արգեն քսերոֆիտի (չուրաբույսի) տիպիկ առանձնահատկություններ ունի: Այս բույսի փնջերով գասաւմորված ասեղնային տերեներն առատ ծածկված են օգով լի մաղիկներով: Տերեներում ուժեղ չափով զարգացել է մեխանիկական հյուսվածքը: Սակայն քափուրախոտի տերեներում նատրիում քլորիդի պարունակությունը դեռևս բավական մեծ է:

Որոշ տեղերում (էջմիածնի շրջան) աղուտներում հանդիպում է ֆրանկենիան (Frankenia hirsuta): Կարմրանի (Tamarix), ավելի (Statice) և ռեսմուրիայի (Reaumuria) նման ֆրանկենիան ես աղերի ավելցուկը տերեների վրա է արտադրում:

Ավազախառն հողերի վրա ձևավորվող աղուտը գլխավորապես կարմրանով է ծածկվում:

Արաքսի միջին հոսանքի հովտում տեղ-տեղ թաքիլներ են հանդիպում: Բուսականությունը թաքիլներում շատ աղքատ է և հողը հազվադեպ է 5 տոկոսից ավելի ծածկված լինում նրանով:

Արաքսի հովտում մեծ տարածություններ զբազված են ջրահանային կամ ջրասեր (հիգրոֆիլ), ինչպես նաև ջրա-աղասեր (հիգրոհալոֆիլ) բուսականության զանազան տիպերով: Արաքսի վարարման, ինչպես նաև ժամանակավորապես գերիխոնավ տեղերում աղուտների և ճահիճների միջև անցողիկ խմբավորություններ

Են զարգանում: Աղուտային անսալատի շատ տեղերում՝ կղզիներով զասավորված կարբոնատային խոնավ-ճիմային կավախառն խիտ հողերում տարածված են գորշ կանաչ, կարծլիկ և աղակայուն ցորենաղդի որդանխոտի (*Aeluropus littoralis*) համատարած բուսութները: Որդանխոտն ունի վերգետնյա բազմաճյուղ սողացող ցողուններ, որոնք ընդուալ կպած են հողին և դեղի վեր են արձակում ոչ-բարձր ճյուղեր՝ խիտ և երկշարք զասավորված տերևներով: Արդանխոտը աղուտների ցածրադիր մասերում աճող բուսականության տիպիկ տարրերից մեկն է: Քանի որ որդանխոտը հզոր արմատային սիստեմ և խիտ ճյուղավորություն չունի, այդ պատճառով էլ նաև ակտիվ ճիմ առաջացնող չէ և նրա աղդեցությունը հողի վրա աննշան է: Շատ տեղերում նաև համարյա մաքուր բուսութներ է կազմում: Սակայն, շատ հաճախ որդանխոտի բուսութների մեջ խառը լինում են և ուրիշ տեսակները ծածր տեղերում հաճախ որդանխոտի հետ խառը հանդիպում է սովոր օշանը (*Salsola soda*), որը տեղատեղ տիրապետուող է հանդիսանում և էլ ավելի ցածր մասերում իր տեղը զիջում է պալարածլախոտին (*Bolboschoenus maritimus*) և ապա եղեգին (*Phragmites communis*), որը ցածրադիր տեղերի հատակում մաքուր բուսութներ է կազմում: Ճահճացած տարածությունները բոնված են բարձր և խիտ եղեգնութներով:

Արարատ կայարանից դեպի հյուսիս-արևելք և Ալուխանլու կայարանի մոտ խոնավ-ճիմային, կոշտերով ծածկված, ուժեղ կապված կարբոնատային և աղուտային հողերի վրա տարածված են յուրահատուկ բուսական խմբավորութներ՝ կազմված որդանխոտից, դունից (*Cyperus*), հատուկ աղասեր հիբիկից և այլ տեսակներից:

Հայաստանում շատ փոքր բժերով հանդիպում է պսամոֆիլ (ավագասեր) անապատային բուսականություն, որն այսուղ ձևավորվում է ալուվիալ ավազների կամ ժամանակավոր լեռնային հեղեղների պրոլուվիալ բերվածքների վրա: Նա գտնվում է աղուտային անապատի շերտում և օշինդրի կիսանապատի ստորին սահմանում և կապված է զուտ տեղական հողային պայմանների հետ: Պսամոֆիլ խմբավորութները մեծ տարածություններ են բռնում էջմիածնի մոտ և չոկտեմբերյանի ու Այզը լճի միջև: Դրանք հանդիպում են նաև Արզու մոտ, Երևանի ու Աղբաշի

միջն, վեղու շրջակայքում և Արարատ (Դավալու) ավանի մոտ Ավաղախառն հողերից մինչև լսկական կույտավոր ավալները բոլոր անցումները կան և դրան համապատասխան հանդիպում էնք. կիսապսամոֆիլ խմբավորումներից մինչև համարյա տիպիկ ավազուս անապատը: Ամենաքնորոշ բույսը մեծ մասամբ հանդիսանում է նրբատերե հազարատերնուկը (Achillea tenuifolia), որը մի գեղեցիկ կիսաթուփ է ակոսավոր սպիտակ ցողուններով: Հազարատիրենուկի հետ, բացի իսկական ավազաբույսերից, հաճախ հանդիպում են օշինդրային կիսաանապատի և այլ բուսական խըմբավորումների տարրեր: Սակայն համեմատաբար ավելի ավազուտեղերում հանդես են գալիս միայն պսամոֆիտները: Հազարատերնուկի խմբավորումների համար շատ բնորոշ է մեծ քանակությամբ մըջնանոցներ լինելը. տեղ-տեղ այդ մըջնանոցները միասին վերցրած ահագին տարածություն են բռնում:

Հազարատերնուկի խմբավորումներից, սովորաբար մարդու տնտեսական գործունեության հետեանքով, առաջանում են զեյդիցիայի (Seidlitzia florida) խմբավորումներ: Դրանք զիտավորապես խոպան հողերում են հանդես գալիս, ինչպես նաև ուժեղ արածացնելու հետեանքով: Դրանք լայն տարածություններ են բռնում Հոկտեմբերյանից դեպի հարավ, Հոկտեմբերյան ավանի և Այզը լճի միջն, նաև էջմիածնի մոտ:

Կույտավոր ավազների պսամոֆիլ բուսականությունը հանդիսանում է մի ամբողջ էկոլոգիական շարքի վերջնօղակը, որի մեջ պսամոֆիլությունը իր կատարյալ արտահայտությանն է հասել: Հայաստանի սահմաններում կույտավոր ավազների ամենամեծ տեղամասերը հանդիպում են Վեդի գյուղից դեպի հարավարեելը և Արարատ (Դավալու) ավանից դեպի արևելք: Այդտեղ ավազաթերերի կատարներին աճում է մի բնորոշ պսամոֆիլ թուփ՝ զեղածնկիկը (Calligonum polygonoides): Ցածը տեղերում՝ թմբերի միջն փռնային բույս է հանդիսանում բարակատերե հազարատերնուկը: Շատ սովորական է այդտեղ նաև արիստիզը և բազմաթիվ այլ տիպիկ պսամոֆիլներ:

Անապատի միանդամայն հատուկ տիպ է ներկայացնում երրորդական գիպսառատկարմիլ կավերի էֆեմերային—հալանքային բուսականությունը: Սկսելով Զըվեժի ձորից՝ կարմիր կավերը ձգվում են նեղ շերտով և դեպի հարավ աստիճանաբար լայնա-

<sup>1</sup> Էֆեմեր—գաղանցիկ, կարճ կյանք ունեցող:

նուև են և համարյա Աղամզալու գյուղին են մոտենում։ Կարսիր կավերի ամենաբնորոշ բույսը միամյա աղամույս՝ աղածաղիկն է (Halanthium rafiflorum)։ Աղածաղիկը փոքր, ճյուղավոր բույս է հերթադիր տերեներով։ Դարնանը աղածաղիկը խոզանակի նման խիտ է ծլում, բայց ամառվաշնթացքում նրա բուսուտները խիստ նուրանում են։ Բացի աղածաղիկց, կարմիր կավերի համար շատ բնորոշ են բազմաթիվ էֆեմերներ (վաղանցիկները)։ Իրանցից առաջին տեղը բանում է մանր միամյա սեզը, որը գարնանը սովորական ֆոնային բույս է։ Այս ցորենապետի բույսը տեղ-տեղ՝ շատ փուխոր կավերի վրա համարյա մաքուր խմբավորումներ է կազմում։ Բազմաթիվ են զանազան երկշաքիլ էֆեմերները։

Էֆեմերահալանթային բուսականության կյանքը սկսվում է վաղ գարնանը, առաջին անձրևներին։ Էֆեմերների բազմերանգ գորգը մայիսին իր ամենաբարձր զարգացմանն է հասնում և արդեն ամառվա սկզբում միանգամայն չորանում է։ Էֆեմերների խիտ գորգը փոխարինվում է քսերոփիլ խոտերի ցրված և հղակի օրինակներով։ Հուլիսին և օգոստոսին համարյա ամբողջ բուսականությունը խանձվում է, և մնում են միայն օշանները և էֆեմերների չոր ցողուններն ու տերեները։

Հայաստանում գիպսոփիլ (գիպսաներ) անտառային բուսականությանը, կամ համագան շատ չնշին տարածություններ է բռնում։ Համմաղայի տիպի բուսականությունը հանդիպում է նախալեռնային գոտում։ Արտաշատի ու Վեդիի միջև Նա կազմը ված է գլխավորապես գիպսաներ խոտերից, կիսաթփերից և թփերից, որոնք զարգանում են գիպսային կավա-խճային լանջերին։

## 2. ՕՇԻՆԴՐԱՑԻՆ ԿԻՍԱԱՆԱԳՈՅ

Արաքսի միջին հոսանքի հովտի և նրա նախալեռնային գտնում մեծ մասը զբաղված է օշինդրային լիսաւնապատով։ Օշինդրային կիսաանապատի տարածությունը անդեպիտոբազալտներից, բազալտներից և հրաբխային տուփերից կազմված թույլ հողմանարված ալիքավոր մի շրջան է, որ գտնվում է ծովի մակերեսույթից մոտավորապես 900-ից մինչև 1500 մետր բարձրության վրա։ Որպես կանոն, օշինդրային լիսաւնապատը կապված է աղոտված և քար-

քարոտ մակերեսով թուիս հողերի հետ Օշինդրի առկայությունը ցույց է տալիս, որ հողերը գյուղատնտեսության համար պիտանի են և այդ է պատճառը, որ երբեմնի օշինդրի տակ եղած հըսկայական տարածություններ ներկայումս մշակվում են և լավ ուսումնական գեպօւմ մնեն բերք են տալիս:

Արաջսի միջին հովտի այն մասերում, որտեղ հողերը ջրազուրկ են և տնտեսական տեսակետից թույլ են օգտագործվում, օշինդրային կիսաանապատն իր նախկին տեսքը համեմատաբար քիչ է փոխել իսկ մեծ մասամբ սկզբնական հիմական տիպը իսկա խախտված և աղբուժված է:

Արաջսի միջին հոսանքի հովիտներում օշինդրային կիսաանապատի տիրապետող բույսը հոտավետ օշինդրն է (*Artemisia fragrans*), որը քսերոֆիլ փոքր կիսաթուփ է փայտացող հիմքով, սպիտակաթաղիք ցողուններով և փոփած հուրանով: Օշինդրի զարգացումը սկսվում է վաղ գարնանը, շարունակվում է ապրիլ և մայիս ամիսներին և դադարում է ամռան շոգերի հետ: Աշնանային անձրևներին օշինդրի զարգացումը վերսկսվում է:

Օշինդրի թփիկները ցաքուցրիվ աճում են քարքարոտ հողի վրա, դրանց արանքները մասամբ այլ բույսերով են բռնված, մասամբ էլ մերկ են: Օշինդրային կիսաանապատի գարնանային բուսականությունը հարուստ է և բազմազան: Մայիս և հունիս ամիսներին այդ բուսականությունը միակերպ է դառնում, իսկ ամառը համարյա ամբողջովին խանձվում է, բացառությամբ օշինդրի, որը միայն աշնանն է ծաղկում:

Օշինդրային կիսաանապատի գոտու վերին մասում՝ թույլագանակագույն և մուգ-թուիս հողերի վրա խիստ մեծանում է ճիյ առաջացնող ցորենազգի բույսերի թիվը: Ավելանում է փետրախոտերի թիվը, և հանդես են գալիս ստեղային մի շարք այլ բույսեր:

Այդտեղ հանդիպում են թե օշինդրային կիսաանապատի և թե ֆրիգանոիդ բուսականության ներկայացուցիչները: Այդպիսի անցողիկ խմբավորումներն առանձնապես շատ են վեղիի շրջանում և վայքում (Դաբալագյաղ),

### Յ. ՖՐԻԳԱՆՈՒԹ ԲՈՒՍԱԿՈՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի բուսականության ամենաբնորոշ տիպերից մեզ կը ֆրիգանիդ, կամ «լիոնա-չորասեր» բուսականությունն է: Վերջինս տարածված է Հայաստանի ամենահարավային, դեպի Իրանի կողմը դարձած ոչ-բարձր լեռնային շրջաններում, որոնք կազմված են գլխավորապես նստվածքային ապառներից՝ կը ային կավակը ային, կը աքարային կամ հաղվադեպ՝ հրաբիսային ապառներից: Այդպիսի շրջաններից են վեդու շրջանը, Վայքի նախալեռնային գոտին, Մեղրու շրջանի ամենահարավային մասը: Կիմայական տեսակետից այդ շրջանները բնորոշվում են շատ խիստ չորությամբ. բոլոր վայրերում էլ տեղումները 350 մմ-ից պակաս են. լեռնային շատ գետակներ և առուներ հոսանք են ունենում միայն անձրևների ժամանակաշրջանում, իսկ ամռան ամիսներին սակալված ջուրը լրիվ կլանվում է գետակների հունի մեջ բացված ճեղքերում: Բոլոր փոքրիչատե թեք, մանավանդ հարավային, լանջերին հողմահարման կեղեւը ուժեղ թափով հոսացվում է, որի հետևանքով հիմնական ապառները մերկանում են: Բուսականությունը շատ թույլ է պաշտպանում հողը լվացումից: Իսկ ժայռերի ճեղքերում աճող բազմամյա, մանավանդ թփային քսերոփիտաների (չորաբույսերի) հղոր արժատային սիստեմները, բացի իրենց արտադրությունների քիմիական ներգործությունից, հեշտությամբ իրարից հեռացնում են ապառների կտորները, բարձրացնում են մեծ շերտեր և պոկում են ամբողջ զանդվածներ: Հողային ծածկույթը սովորաբար լինում է ծայր աստիճան սակավազոր, խիստ չնային, կամ հաճախ նրբյնիսկ համարյա բոլորովին բացակայում է: Հողառաջացման սկզբնական փուլեր նկատվում են միայն գարտափերում և ապառների բեկորների ու ժայռերի միջի տարածություններում:

Ֆրիգանութ բուսականությունը կարելի է երեք տիպ բառանել՝ ֆրիգանա, գաղուտներ և տոմիլյարներ: Ֆրիգանան և գաղուտները աճում են ժայռոտ և ժայռահնձային լանջերին, իսկ տոմիլյարները՝ սասորին շերտի կավախճային լանջերին և նախալեռնային ըլուրների վրա:

Հայաստանում միջներկրածովյան «ֆրիգանայի» տիպի բուսական խմբավորումներն աչքի են ընկնում մեծ մասամբ բարձր

Հորադիմացկունությամբ և գաղերի նման վշտա ձևերի մեծ քանակությամբ։ Հատկապիս ընորոշ են մանրատերեւ թփերը և բարձանձան բույսերը։ Խալական թփերից այդտեղ հանդիպում են նշենու հատուկ մանրատերեւ տեսակները, վայրի տաճճենու նեղատերեւ ձևերը, Արաքսի բալենին, Պալլասի կամ քաղցր գծնիկը և այլն։ Թրիգանայի թփերը թզուկ հասակ ունենալու պարզ արտահայտված հակումն ունեն թզուկ հասակի հետևանքով թփերից շատ շատերը ունենում են կիսադնդաձեւ, բարձանման տեսք։ Այդպես են այդտեղ շատ տարածված վշտա թփերը՝ գաղերը (Astragalus) և ողնաթփերը (Acantholimon), մրիգանայում շատ մեծ քտնակությամբ ծայր աստիճան քսերոֆիլ կիսաթփեր են հանդիպում։ Դրանք հաճախ աչքի են ընկնում բավականին երկար ժաղիկներից կաղմած շատ խիտ գորշ, արծաթափայլ կամ համարյա սպիտակ թափով։ Խիտ մազե ծածկույթը պաշտպանում է ուժիղ լրույսից և շատ մեծ գոլորշիացումից։ Մրիգանայում շատ կան ամենատարբեր չորասեր բաղմայաներ։ Գարնանը աճում են կոճղավոր և միամյա շատ բույսեր։

Մրիգանայի բուսականությունը երբեք խիտ չի աճում։ Շատ նոսր և սակավ ընկատելի գորշաթակ բուսականության շնորհիվ դրիգանան հեռվից ժայռերի կույտերի է նմանվում։ Անկյանք քարուտները և դեպի ցած իջնող ժապավենանման փլյածքները, կրաքարերի աղյուսակարմիր գույնը լրացնում են պատկերը՝ վայրի և վեճ գեղեցկության գծեր հաղորդելով ամբողջ տեսարանին։

Մրիգանայի տիպի բուսական խմբավորումներում խիստ արտահայտված հարկայնություն չկա և շատ գժվար է որոշելի թի որոնք են աիրապետող տեսակները։ Այդտեղ ոչ մի տեսակ փոքր ի շատեւ մեծ տարածության վրա փոն չի կազմում։ Դրանք աճում են իրար հետ խառը։ Խմբավորումների ընդհանուր պատկերն աչքի է ընկնում իր խայտաբղետությամբ։

Մրիգանայի կյանքը սկսվում է վաղ գարնանը, երբ սկսում են ծաղկել կոճղեսավորները, միամյա էֆեմերները, վայրի նշենիները, Արաքսի բալենին և այլն։ Աճեցողության առավելագույնը մայիս ամսին է ընկնում։ Այդ ժամանակ դրիգանան լի է կյանքով և գույներով։ Հունիսից սկսվում է ամառային

Նվազումը, իսկ հուլիսին և օգոստոսին բոլոր միաժյաները և գարնանային միաշաքիլները խանձվում են: Այդ ժամանակ ավարտվում է բաղմացյաներից մեծ մասի ծաղկումը, դադարում է աճեցողությունը. բայց դրա փոխարեն արևի կիզիչ ճառագայթների տակ ինտենսիվ կերպով հասունանում են պտուղները և սերմերը:

Ամենատիպիկ ֆրիգանան զարգացած է Արաքսի միջին հովտի նախալեռներում՝ մինչև ծովի մակերևույթից 1800 մետր բարձրության վրա (Երանոս լեռան, Բող-Բուրուն լեռների և Ուրծ կամ Սարայրուղաղի լեռնաշղթայի հարավային լանջերին), Միկոյանի շրջանում և Մեղրու շրջանի հարավային մասում:

Ֆրիգանոիդ բուսականության հատուկ տիպն են կազմում գազուտները: Դրանք փշոտ աստրադալների բուսաւաներ են, որոնք կզգիներով հանդիպում են գտղի ստեղների ստորին սահմանի մոտ՝ հողի ծածկութից համարյա զուրկ քարքարոս լանջերին: Այստեղ իսկական թփեր համարյա չկան և բազմաժաց ցորենազգիներն ու կոճղեսավորներն էլ շատ քիչ են: Գազուտները շատ բնորոշ են Վայքի համար: Գազուտների հատվածներ կան նաև Սեանս լճի Արեգունու ափին, Փամբակի հովտում, Արագածի հարավային լանջերին և Մյունիքում:

Ֆրիգանոիդ բուսականության երրորդ տիպը Միջերկրածովյան տամիլյարների տիպի բաւախմբավարումներն են, Դրանք տարածված են կավախճային, հարթացած և կլորավուն բլուրներով նախալեռներում և լեռնալանջերին: Այդ խմբավորումները զանազան չորասեր շրթնածաղիկների բուսաւաներ են՝ այլ ընտանիքների (գլխավորապես բարդածաղիկների ընտանիքին) պատկանող մի շարք բազմամյա չորաբույսերի մասնակցությամբ: Այդտեղ տիպիկ դեպքերում իսկական թփեր բոլորովին չկան և միայն եղակի կամ շատ նոսր ցրված հանդիպում են փշոտ կիսաթփեր: Շրթնածաղիկների խմբավորումները թե ըստ տեսքի և թե ըստ տիրապետող կենսական ձևերի խիստ տարբերվում են Փրիգանայի բոլոր տիպերից: Հայաստանի հարավային մասի տոմիլյարների տիրապետող տեսակն է սպիտակաթաղիք կիսաթուփ աբեղախոտը (*Stachys inflata*), որը Փրիգանայում էլ է հանդիպում: Այդ բույսի ցողունները թիտոպիտակաթաղիք են, տերևները՝ վերնից սպիտակավուն-դոր-

շաբթավ, իսկ տակից՝ համարյա սպիտակէ: Տոմիլյալներում աքեղա-  
խոտին համասար մեծ դեր է կատարում չորասեր ուրցը (Thymus  
Kotschyanus), որը Փրիգանայում և օշինդրային կիսաանապատում  
շատ սովորական բռյու է: Բացի աբեղախոտից և ուրցից, տոմի-  
լյարներում մեծ դեր է կատարում տիպիկ գեղձային չորասրույր  
հանդիսացող կիսաթփային եղեսպակը (Salvia dracocéphalo-  
des). այդ բռյուն աչքի է ընկնում շատ ուժեղ եթերայուղային  
բռըմծունքով և բազմաթիվ գեղձիկներով տերեների վրա: Հաճախ  
է պատահում նաև հոտավետ օշինդըը:

Տոմիլյարներն առանձնապես բնորոշ են Զանաթիլու—Վե-  
դիի շրջակայքի ստորին լեռնային գոտու կավակրակավային  
լանջերի համար: Տոմիլյարների փոքր տեղամասեր հանդիսում  
են արգեն Փրիգանայի մարդում: Իսկ ավելի լայնարձակ տարա-  
ծություններ զրանք զբաղեցնում են դեպի Արաքսի հարթավայ-  
րը իջնող բաց լանջերին: Տոմիլյարները համարյա անընդհատ  
շերտով ձգվում են Ալբաշ գյուղի շրջակա լեռներից մինչև Վեդի  
գյուղի շրջակայքը: Ալբաշեղ նրանք կապված են կրակավային,  
իսկ փոքր սուր սալերով ծածկված խոյտաբղետ լեռների և  
բլուրների ալիքավոր սելցիքի հետ: Յուրահատուկ թուլլակիքա-  
փոր բազմերանդ տարածությունները հեռվից թողնում է իսկական  
անապատի տպագործություն:

Տոմիլյարները պատահում են նաև Վայքում, բայց այդտեղ  
զբանք այնպիսի տարածություններ չեն բռնում, ինչպես Աղ-  
բաշի և Վեդու միջև: Տոմիլյարների հատվածներ հանդիպում են  
Արփա գյուղի շրջանում, նաև Միկոյան գյուղի շրջակայքում:  
Անենամեծ տարածությունները զրանք զբաղեցնում են Միկոյան  
և Գետափ գյուղերի միջև և Բազդյուղից բարձր:

Ֆրիգանոիդ խմբավորումների տեսակային կազմը (Փլորան)  
բացառիկ հետաքրքրություն է ներկայացնում: Այդ բույսերի  
մեջ խիստ շատ կան ծայր աստիճան հաղվազյուտ տեսակներ աշ-  
խարհագրական տարածման շատ փոքր արեալով: Ֆրիգանոիդ  
բուսախմբավորումների մեջ մտնող բույսերի տեսակները հետա-  
քըքքրական են նաև նրանց կաղմության և կյանքի տեսակե-  
տիք: Այդ տեսակների մեջ մենք անձնում ենք բազմաթիվ ամե-  
նազանազան քսերոֆիլային հարժարանքներ, պատւղների և սեր-  
մերի հետաքրքրական շատ հարժարանքներ և այլն:

Ֆրիգանոփիդ բուսականությունը նշանակալից գործնական հետաքրքրություն էլ ունի, քանի որ նրա կազմի մեջ կան բարձրաբժեք եթերայուղատու և այլ տեխնիկական բույսեր:

Հայաստանի ֆրիգանոփիդ բուսականությունը շարունակվում է Իրանում, դեպի հարավ, որտեղ նա իր տեխնամեծ դարձացմանն է հասնում:

#### 4. ՍՏԵՂՈՆԸՐ

Ստեղները կամ տափաստաները հանդիսանում են Հայաստանի բուսականության ամենաբնորոշ տիպերից մեկը և ընդառնակ տարածություններ են բռնում: Դրանք շատ բազմազան են և հաճախ թե ընդհանուր տիպով և թե վլորիստիկ կազմով խիստ տարրերվում են իրարից Բայց որքան էլ ստեղները տարրեր լինեն, դրանք մի շարք ընդհանուր հատկանիշներ ունեն, որոնցով տարրերվում են թե մարգագետիններից և թե կիսաանապատից ու ֆրիգանոփիդ բուսականությունից: Ստեղները մարգագետնային բուսականությունից տարրերվում են իրենց համեմատաբար ավելի քսերոֆիլությամբ և ամառային ճնշվածությամբ, երբ չօրության և շոգի հետևանքով տեսակների մեծ մասը խանձվում է: Խոկական մարգագետիններն ամառը երբեք չեն խանձվում և քսերոֆիլ տեսակներ չեն պարունակում, թեև, իհարկե, լինում են և անցողիկ խմբավորումներ ստեղների և մարգագետինների միջև: Ստեղները կիսաանապատից և ֆրիգանոփիդ բուսականությունից տարրերվում են նրանով, որ ունեն ճիմ տուշացնող, բազմաթիվ ցորենազգի տեսակներ, ավելի խիստ խտածածկութ, և պակաս քսերոֆիլ են: Մի կողմից ստեղները և մյուս կողմից կիսաանապատն ու ֆրիգանոփիդ բուսականությունը իրար հետ կապված են միջանկյալ խմբավորումներով:

Հայաստանի ստեղնային բուսականությունը շատ տեղերում հիշեցնում է Արևելյան Եվրոպայի հարթավայրային ստեղները: Այդ ստեղները շատ բնորոշ են հրաբխային բարձրադիր հարթությունների համար, որոնք կլիմայական և հողային պայմանների որոշ կողմերով նման են Արևելյան Եվրոպայի տափաստանային շրջաններին: Տեղ-տեղ բուսականությունն այնքան մեծ չափով է հարավ-ուռուսական ստեղները հիշեցնում, որ, ինչպես

Հայտնի ուսւ բռւսաշխարհագրագետ Ն. Կուզնեցովն է գրել, «Կարելի է կարծել, թի մի ինչոր անհայտ ուժ՝ մի ժամանակ հափշտակելով հարավ-ուսւական անծայրածիր ստեղի մի մասը, քերել և տեղափորել է Կովկասի այս մեկուսի անկյունում։ Սակայն Հայաստանի շատ ուրիշ տեղերում ստեղային բռւսականությունը Արևելյան Եվրոպայի հարթավայրերի ստեղներից խիստ տարբեր, այլ տեսք ունի։

Ամենատիպիկ սեահողային ստեղները վիտրախոսային ստեղներն են։ Այդ ստեղներն առանձնապես բնորոշ են Շիրակի սարահարթի, Ամասիայի շրջանի և Լոռու համար, որտեղ զրանք կապված են շատ հումուս պարունակող մոխրագույն և շագանակագույն սևահողերի հետ։ Այդ վայրերը «տափաստանային» երկրագործության տիպիկ շրջաններ են, որտեղ հացահատիկների դաշտերը չեն ոռոգվում, բայց բանջարանոցները ոռոգվում են։

Ներկայում միետքախոտային ստեղների համարյա ամբողջ տարածությունը հերկված է, իսկ նրա չվարված փոքր տեղամասերը մեծ մասամբ բավականաչափ բնորոշ չեն։ Այդտեղ փետրախոտի մի քանի տեսակներ են պատահում, որոնցից նեղատերե փետրախոտը (*Stipa stenophylla*) ամենամեծ տարածություններ է զբաղեցնում։ Ավելի քսերոֆիլ տիպի ստեղներում գերակշռում է պրնտական փետրախոտը (*Stipa pontica*). Փետրախոտի հետ միասին հանդիպում են ակոսավոր շյուղախոտը (*Festuca sulcata*), կելերիան (*Koeleria gracilis*), սիդախոտը (*Phleum phleoides*), սեղը (*Agropyron cristatum*), կենդանածին դաշտավլուկը (*Poa bulbosa*) և բազմաթիվ ստեղային երկաքիւներ։ Որոշ տեղերում ակոսավոր շյուղախոտն այնքան առատ է տարածված, որ կարելի է խոսել շյուղախոտային ստեղների մասին։ Դրանք կապված են սակավազոր կմախքային հողերի հետ և անչափավոր արածացնելու հետևանքով հանդիսանում են փետրախոտային ստեղներից առաջացած երկրորդային տիպ։ Շյուղախոտային ստեղները շատ տարածված են Շիրակի (Յասառուի) լեռնաշղթայի ստորին գոտու հարավային լանջերին, Զաջուրից մինչև Արջուտ՝ ամենալավ արտահայտությանը հասնելով Համամուտի միջօրեականում։

Փետրախոտային ստեղների գոտուց վեր սկսվում են ցարենազգիների՝ տարախոտային ստեղները։ Դրանք սկսվում են

ռելլեֆի բլրաշատ մասերում և անցնում են Արագածի ու  
մյուս լեռնային դանդվածների զարիկող լանջերին: Բացի քսե-  
րովիլ ցորենազգիներից, այստեղ շատ տարածված են տարախու-  
տերը: Ավելի չորասեր են տարախոտային ստեփները: Դրանք  
մեծ մասամբ զարգանում են հարավային չոր լանջերի խճոտ  
կամ քարքարոտ հողերի վրա: Այդտեղ հողերը թույլ են ձիւա-  
վորված: և կան մերկ հողերի մեծ տարածություններ: Տարա-  
խոտային ստեպները խիստ խայտաքետ պատկեր են ներկայաց-  
նում և փոքր ի շատեւ մեծ տարածությունների վրա չունեն կա-  
յուն կազմ: Դրանք մեծ մասամբ առաջացել են ցորենազգիների  
ստեպների տեղում, որպես մարդու ներգործությամբ քսերովի-  
լացման ենթարկվելու հետևանք:

Ել ավելի չոր և քարքարոտ վագրերում, ինչպես նաև արա-  
ծացրած տեղերում տարածված են փետրախոտային ստեպները  
վիզոտ բարձանման (տրագանտային) գաղերով (տրագանտային  
ստեպներ): Վերջիններիս ամենաափակի տեղամասերը գտնվում են,  
Արագածի լանջերին: Դրանք հանդիպում են նաև Փամբակի լեռ-  
նաշղթայի հարավային լանջերին և Ամասիայի շրջանի հարավ-  
արենելյան մասում: Այդ բոլոր շրջաններում տրագանտային ստեպ-  
ները երկրորդային են: Դրանք առաջացել են խոտային ստեպ-  
ներից անասունների ներգործության տակ, մի հանգամանք, որը  
նպաստել է փշավոր գաղերի ներթափանցելուն:

Ստեպները մեծ տարածություններ են գրավում նաև Սևա-  
նա լճի ավազանում: Այդտեղ գլխավոր տիպերն են շյուղախո-  
տա-փետրախոտային, փետրախոտային և շյուղախոտային ստեպ-  
ները: Շյուղախոտա-փետրախոտային ստեպները տեղատեղ ան-  
միջապես լճափին մոտենալով՝ բարձրանում են ծովի մակերեսույ-  
թից մինչև 2200—2400 մետր: Ամենաշատ տարածությունը  
դրանք բռնում են լճի հարավային և հարավ-արենելյան ափերին:  
Հարավային ափերին նրանք բռնում են քարքարոտ-խճոտ լավա-  
յին տարածությունները: Արենելյան ափին դրանք գտնվում են  
Մազրայի հարթության ծայրամասերում: Շյուղախոտա-փետ-  
րախոտային ստեպների հողը չոր սեահող է: Այդ տափաստանի  
ափելի լավ պահպանված մասերում ամենուրեք գերակշռում է  
մազոտ փետրախոտը (*Stipa capillata*): Իսկ անասունների արա-  
ծացած տեղերում տիբապետում է ակոսավոր շյուղախոտը: Տեղ-

տեղ խիստ արածացնելու հետևանքով փետրախոռոշ բոլորովին անհետանում է: Այդպիսի տեղերում գոյություն ունեն շյուղախոտային ստեղներ: Եյուղախոտա փետրախոտային ստեղների բոլոր, փոքր ի շատե երկրագործության համար պիտանի, տեղաժամասերը ներկայում հերկված են և օգտագործվում են հացաբույսերի մշակության համար:

Սկսնի ավազանի փետրախոտային ստեղները՝ սկսվելով շյուղախոտա և փետրախոտային ստեղների վերին սահմանից, համանում են մինչև 2600 մետր և ավելի բարձրության: Դրանք անընդհատ գոտի չեն կազմում, տարածված են ուկյեֆի զառիկող, սակավ քարքարոտ և մեզմ ուրվագծերով լանջերին: պատահելով սոսկ որպես առանձին, փոքր ի շատե խոշոր կղզիներ: Դրանց հողերը աղաղերցված սեանողեր են՝ բավականին նշանակալից հումուսային հորիզոնով: Ստեղնի հիմնական փոնը կազմում են ցորենաղիք բույսերը: Գերազանց տեսակն է նեղատերև փետրախոտը: Վերջինս գերիշխում է գլխավորապես ավելի մեղոփիլ պայմաններում, սովորաբար հյուսիսային թեքության լանջերին: Նեղատերև փետրախոտի խմբավորումների մեջ շատ կան զուտ մարգագետնային, հաճախ բարձր-լեռնային տեսակներ: Ավելի չորասնիր տիպի ստեղներում գերազանցում է պոնտական փետրախոտը: Պոնտական փետրախոտի խմբավորումները սահմանափակ տարածություններ են բռնում և տարածված են գլխավորապես Արգիճիի (Այրիջայի) սարահարթում, Քարվանսարա գյուղեց մինչև Յանըի գյուղը ձգվող լեռնաշղթայի վրա, որտեղ նրանք զբաղում են հարավային թեքության ավելի չոր լանջերը: Այդ խմբավորումների մեջ հաճարյա միայն ստեղնային տեսակներ են մանում:

Սկսնի Արեգունու ափին խիստ տարածված են տրագանտային ստեղները, որոնք տեղ-տեղ վերածվում են խկական գաղուտների: Այդ ստեղների տարածման մեջ գնուական գերը պատկանում է լանջի էքսպոզիցիային: Հարավային լանջերը տրագանտային ստեղներով են ծածկված, մինչդեռ հյուսիսային լանջերին սուբալպիական բուսականությունը հաճախ մինչև լճի եզրն է իջնում: Տրագանտային ստեղները համարում են մինչև 2000 մետր բարձրության ծովի մակերեսույթից՝ շատ տեղերում սկսվելով ուղղակի լճի ափեց: Դրանք սկսվում են Արեգունու հյուսիսարևելական անկյունից,

որտեղ հերթափոխվում են անտառային բուսականության հատու-  
վածների հետ: Այդտեղից ստեղներն առանց ընդհատվելու ձըգ-  
վում են մինչև Արտանիշի (Աղաթափայի) թերակղզին, որտեղ  
նորից միանում են անտառին: Արեգունու հարավարենէլյան մա-  
սում տրագանտային ստեղները պատահում են անտառի մեջ ա-  
ռանձին հատվածներով: Արեգունու տրագանտային ստեղները  
նույնպես առաջացել են իիստ արածացներու և դրա հետ կապված  
փշոտ բարձանման թփերի՝ գաղերի, փշոտ կորնդանի և ողնա-  
թուփի ներթափանցելու հետևանքով: Նայած թե այդ փշոտ թփե-  
րը ինչ չափով են մասնակցում խմբավորման, կարելի է տարբերել  
գաղերի ստեղներ և փշոտ կորնդանի ստեղներ: Ի տարբերու-  
թյուն գաղերից, փշոտ կորնդանը անընդհատ տարածում չունի և  
միայն որոշ շրջաններում է հանգիստում: Ամենից հաճախ նա հան-  
դիպում է գաղերի տարածման գոտուց վեր և որոշակիուրեն ձըգ-  
տում / է դեպի կրաքարային բացվածքներ:

Տրագանտային ստեղները շատ բնորոշ են վայրի մարզի և  
վեղիի շրջանի համար: Դրանք տարածված են մինչև լեռնային  
գոտում (1500—1700 մետր), որտեղ մեծ տարածություններ են  
բռնում. այդտեղ զրանք կրում են մեծ մասամբ երկրորդային  
ընույթ և առաջացել են զիհուտների ու կազմու անտառների տե-  
ղերում: Տրագանտային ստեղները վայրում զլխավորապես կորն-  
դանային խմբավորումներով են ներկայացված և ընդարձակ տա-  
ռածություններ են զրավում Հարավային Սևանի և մանավանդ  
վայրի լեռնաշղթաների լանջերին:

Տրագանտային ստեղները լայն տարածված են նաև Սյունիք  
գումար: Տրագանտային ստեղներին հավասար այդտեղ մեծ տարա-  
ծություններ են զրավում նաև տարախոսային ստեղները: Դրանք  
առանձնապես բնորոշ են Սյունիքի հյուսիսային մասի համար:

Հայաստանում տեղատեղ (Արագածի արևմտյան լանջերին,  
Արգնու շրջակայքում, Ուրծի՝ Սարացրութափի լեռնաշղթայում և  
մի քանի այլ տեղերում) տարածված են սանրանման սեղի  
ստեղները: Դրանք զարգանում են գլխավորապես սակագազար,  
իիստ կմախքային հողերում՝ սովորաբար հարավային թեքու-  
թյան լանջերին: Հողն այդտեղ թույլ է ճիմուփած, հողի ծածկ-  
փածությունը 70—80 տոկոս է: Հիմնական բույսն այսուեղ սան-  
րանման սեղն է (Aegropyon cristatum):

Ալավերդու և Խջեանի շրջաններում, ինչպես նաև տեղ-տեղ  
Սյունիքում, Արթիկի և Ախուրյանի շրջաններում տարածված  
են կծմախոտային ստեպները, որոնք գարզանում են շագանակա-  
դույն հողերի կամ սեահողերի վրա: Հողն այդտանդ ծածկված է  
75—85 տոկոսով: Տիրապետող բույսն է կծմախոտը (Andropogon  
ischaemum): Կծմախոտային ստեպները մեծ մասամբ երկրորդա-  
յին են և առաջացել են անտառային բուսականության ոչնչաց-  
ման հետևանքով: Կծմախոտային ստեպները մեծ տարածություն-  
ներ են բնուու Ալավերդու շրջանի հյուսիսային անտառագույք  
մասերում:

Մյունիքում (Միսիանի և Գորիսի շրջաններում) տարած-  
ված են շատ յուրահատուկ օշինդրային ստեպներ. գերեշ-  
խող տեսակը հանդիսանում է այստեղ օշինդրի հատուկ տեսակը  
(Artemisia marschalliana): Օշինդրային ստեպները շատ քսերո-  
ֆիլ են:

Ամասիայի շրջանի, Լոռու, Ապարանի, Միսիանի շրջանի և  
Հայաստանի մի քանի այլ տեղերի հետ զարգացած (դեղրաղացած)՝  
սեահողերի վրա, ջրային համեմատաբար նպաստավոր ուժիմի  
պայմաններում տարածված են մարգագետնային ստեպները: Մար-  
գագետնային ստեպների բուսական ծածկույթի կազմի մեջ նշա-  
նակալից դեր են կատարում այնպիսի սուրալպիական բույսեր,  
ինչպիսին են վարդագույն երիցուկը (Tanacetum roseum), խոշո-  
րածաղիկ թթվիճը (Betonica grandiflora) և այլն:

Մարգագետնային ստեպների շրջանում տեղ-տեղ մեծ տա-  
րածություններ է բնուու ջրահանձային բուսականությունը:

### 5. ՔՍԵՐՈՒՑԻԼ ՆՈՍՐԱՆՏԱՌՈՒՆԵՐ

Բուսականության քսերոֆիլ տիպերի և անտառների միջև  
անցումները Հայաստանում հաճախ շատ աստիճանական են լի-  
նում: Միջակա բուսախմբավորում են հանգիստանում բներովիլ  
նորանատները, որոնք, սակայն, ունեն ինքնուրույն նշանակու-  
թյուն, որույն առանձնահատկություններ և սեփական պատմու-  
թյուն: Դրանք ոչ բարձր ծառերի և թփերի նոսր և ըստավարա-  
տնկարքներ են, որոնց ստորին հարկը փոքր ի շատե քսերոֆիլ  
խռուերից է կազմված: Երբեմն խոտի ծածկույթն ունի խիստ

արտահայտված քսերոֆիլ բնույթ. այլ գեպքում, երբ տնկարք-ներն ավելի խիտ են և ատլերոտ, կան նաև անտառային խոտեր:

Չորսամեր նորանտառները երկու տիպի են լինում: Արոշ գեպքերում զբանք կազմված են երկշաքիլ թփերից ու մանր ծառաերից (սաղարթափոր նորանտառ կամ «շիրլյակ»). այլ գեպքերում գերիշխող ձևերը գիճու կտնազան տեսակներն են (զիհու նորանտառ):

Շիրլյակը լայն տարածված է Հայաստանի հյուսիսային մասում: Նա տանձնապես բնորոշ է Աղավերդու և Իջևանի շրջանների համար: Այդտեղ զբանական տիպերն են՝ խառը շիրլյակ և ցաքու շիրլյակ: Խառը շիրլյակը հանդիպում է զվաճառապես Փամբակի ձորի ձախափնյա լանջերին, Արավերդի-Այրում շրջանում, Աղստև գետի ձախափնյա մասերում՝ Իջևանի շըրջանում և Հախում (Հասան) գետի ստորին հոսանքի ձախափնյա մասերում՝ Թալրա գետի անտառային տնտեսությունում: Խառը շիրլյակն աճում է հարավային չոր, խիստ լվացված լանջերին, միծ մասամբ նոսր բռւսուա է՝ կազմված ցածրացողուն թփերից՝ ասպիրակ (Spiraea), ցրպտկի (Cotoneaster), հասմիկ (Jasminum fruticans), ցաքի (Paliurus spina-Christi), քաղցր գժնիկ (Rhamnus Pallasii), ցախակեռամեր (Lonicera) և այլն, խառն եղակի ծառերով՝ փաշնի (Celtis), վրացական թղկի (Acer ibericum), նշենի (Amygdalus fenzliana), խնկենի (Pistacia mutica) և դրախտածառ (Cotinus coggygria): Խոտային ծածկույթը կազմված է ստեպային և ֆրիգանորիդ բուսականության տարրերից: Ցատ հեղինակներ շիրլյակի այդ տիպը «գարիգա» են անվանում: Սակայն շիրլյակը Միջերկրածովյան իսկական մշտադալար գարիգայի ենա ոչ մի նմանություն չունի:

Ցախ շիրլյակը խառը շիրլյակից տվելի լայն է տարածված: Այն աճում է նախալեռնային գոտու զառիկող լանջերին՝ շագանակագույն և բաց-շագանակագույն հողերում: Ցախ շիրլյակի միծ տարածություններ հանդիպում են անտառի ստորին՝ սահմանի մոտ՝ Սագախլո, Կողբ, Սեքար գյուղերի և Շամշադնի շրջանի սահմաններում: Ցախու շիրլյակի տիրապետող թուփը ցաքին է (Paliurus spina-Christi), որը երբեմն անանցանելի մացառներ է կազմում: Ցաքին փշոտ և կոչչուն թուփ է ճիպոտանման ճյուղերով և հերթագիր հոաջիկ տերեներով: Պտուղները

չոր են և շատ բնորոշ ալիքավոր շըջանաձև թէ ունեն: Ցաքու շիրլյագին ծածկույթում գերակշռում է կծմախոտը: Ցաքին և մյուս թփիկը կարտելու դեպքում այդ շիրլյակը փոխվում է կծմախոտի ստեղի:

Շիրլյակի տիպի բուսական խմբավորությունը ընորոշ են նաև Սյունիքի համար: Այստեղ ամենից հաճախ ցաքու շիրլյակ է հանդիպում, բայց կան նաև իտուր և նոնինու շիրլյակի հատվածներ: Այստեղ շիրլյակի մեծ հատվածներ են տարածված Պաշարաջրի (Շահվերդիլարի) և Գորիսի միջև, Ղափանի մոտ և մի քանի այլ տեղերում: Սյունիքում շիրլյակն աճում է թույլ արտահայտված և խիստ կծմախքային հողերով ծածկված քարքարու և ժայռու լանջերին: Տիպիկ շիրլյակը տարածված է 700-ից մինչև 1000—1100 մետր բարձրության վրա:

Մեղրու շրջանում հանդիպում է ամենաքսերոֆիլ շիրլյակը, որը մի շաբթ անցումներ ունի զեղի գրիգանան:

Էկլոգիական տեսակետից շիրլյակի հետ սերտ կապված է գիճու նոսրանոտայրը: Գիճիները սուզնատերեկ բույսեր են: Դրանք չոր կլիմացի և քարքարոտ աղքատ հողերին հարմարված թփեր կամ փոքր ծառեր են: Հայաստանում գրանք մեծ ժամամբ խիստ ցանցան նոսրանոտառ են կազմում, թեև հրբեմն հանդիպում են նաև բավականին խիստ անկարգներով: Հայաստանի հյուսիսային ժամանում գիճու նոսրանոտափ առանձին հատվածներ հանդիպում են Դեբեդ գետի ձորի երկարությամբ՝ Ալավերդու և Այրումի միջև, Ազստեղ գետի հովտի երկարությամբ՝ իջևանի և Սեքարի միջև և մի քանի տեղ Փամբակի գետի մոտ: Դրանք փոքր հատվածներով հանդիպում են նաև լեռնային գետերի զարդարանիքի վրա: Այստեղ գիճու տիրապետող տեսակն է զարշահոտ գիճին կամ ցրտնենին (Juniperus foetidissima), որը խիստ նոսր տնկարք է տալիս՝ իրարից հեռու դասավորված ծառերով: Առ բրդաձև պսակով ծառ է, ասեղանման, ձվածն կամ նշտարաձեռուր ու ծակող տերեներով: Որպես խառնուրդ կամ եղակի օրինակներով հանդիպում են նաև արևելյան գիճին կամ արտուճը (Juniperus polycarpos) և փշոտ գիճիներ: Գիճու հետ սովորաբար հանդիպում են նաև ցաքի, խնկենի և սակավաթիվ՝ զբախտածառ, փռշնի և զանազան քսերոֆիլ թփեր: Խուային ծածկույթի մեջ տիրապետում է կծմախոտը: Գիճու նոսրանոտառները

մինչև 1000—1100 մ բարձրության վրա հաճախ խառը տնկարքներ են կազմում շիբլյակի կամ կաղներոխային խմբավորումների հետ Այդպիսի գեաքերում գիշին միշտ էլ տեղադրված է լինում ուղղեցի գուրս ցցված մասերում, իսկ խառը տնկարքի մյուս անդամներն աճում են ցածրադիր մասերում կամ մի քիչ ավելի սավերությանցերին:

Եթե Հայաստանի հյուսիսային մասում գիհու տիրապետող տեսակը գարշահոտ գիհին կամ ցրտնենին է, ապա հարավային մասում որպես այդպիսին հանդես է դալիս ավելի քսերովիլ արեելյան գիհին կամ արտուճը: Վերջինս ոչ միայն ավելի քսերովիլ է, այլև ավելի ցրտակայուն, քան ցրտնենին: Արեելյան գիհին այս վերջինից տարբերվում է իր կղմինդրածե դասավորված և մեջքին ձյութատար գեղձիկներ կրող չծակող տերեւներով:

Սևանի ավաղանում գիհու նոսրանտառները հանդիպում են Արեգունու ափին, որտեղ զբանք բավականին բարձրանում են՝ ամելով նույն բարձրության վրա, ինչ որ՝ կաղնու անտառները: Դրանք ամենից շատ տարածված են Արեգունու ափի հարավային մասում: Արտանիշ գյուղից մինչև Սատանախաչ: Գիհու փոքր ի շատե խիտ տնկարքները սկսվում են Զիլ գյուղի մոտ և իրենց առավելագույն զարգացմանն են հասնում Բաբաջան գյուղի մոտ: Արեգունու գիհու տնկարքները ներկայումս նուր մացաներ են, բայց անցյալում դրանք իսկական անտառներ են եղել:

Վեգի գետի ավաղանում գիհու նոսրանտառը հանդիպում է միայն առանձին կղզյակներով: Սյատեղ զբանք վերջնականապես ոչնչանալու վրա են: Սակայն կեթուս գյուղի շրջանում գեռեւ կարելի է տեսնել գիհու բավական լավ պահպանված խիտ տընկարքներ:

Գիհուտների ավելի մեծ տարածություններ կան Վայքում, Դրանք առանձնապես լավ են պահպանվել Արփա գետի վերին հոսանքում: Չայքենդ գյուղի շրջանում: Բաղմաթիվ փաստեր ասում են այս մասին, որ Վայքում գիհուտները մի ժամանակ շատ լայն տարածում են ունեցել Դրանց ամենուրեք տարածված մնացորդները գտնվում են Փրիգանոիդ բուսականությանը փոխարկվելու զանազան ստալիբաներում: Սյունիքում գիհու նոսրանտառներ հանդիպում են Աղջի գետի վերին հոսանքում: Դրանք մեծ տարածություններ են դրակում Մեղրու շրջանի հա-

բազմարեմտյան մասում: Այստեղ մինչև 1700 մ բարձրության վրա տիրապետում է ցրտանենին, իսկ ավելի վեր՝ արեհը գեհնին: Հաճախ գեհնու նուրանտառներն այս շրջանում հանդիպում են ֆրիգանոիդ բուսականության հետ խառը:

#### 6. ԱՆՏԱՌՈՒՆԵՐ

Հայաստանն անտառներով աղքատ է: Անտառային բուսականությունը բունում է երկրի ամբողջ տարածության 8—9 տոկոսից ոչ ավելին: Անտառներով ամենից հարուստ մասը Հայաստանի հյուսիսային շրջաններն են, այդ մասի մոտավորապես 28—30 տոկոսը ծածկված է անտառներով: Իսկ Հայաստանի հարավային մասում անտառները կազմում են տարածության միայն 4,5 տոկոսը:

Ներկայումս անտառների ամենամեծ տարածությունները գտնվում են Հայաստանի հյուսիսարևելյան շրջաններում: Անցյալում այս ամբողջ մարզը կուսական անտառների երկիր է եղել, բայց անտառային բուսականության մի ստվար մասը մարդը հետաքայում ոչնչացրել է: Հայաստանի հյուսիսարևելյան անտառային բուսականության հիմնական և տիրապետող տիպը հանրի անտառներն են: Անտառը կազմող տեսակն այստեղ արևելյան հաճարին է (*Fagus orientalis*): Արևելյան հաճարին մինչև 30—40 մ բարձրության հասնող ծառ է՝ հարթ և բաց գույնի կեղևով: Հաճարի տերենները կաշեկերպ են, փայլուն, էլիպսաձև կամ ձվաձևիպասձեւ, գագաթին սրված: Տերենի եղբը և ստորին մակերեսը՝ մանավանդ ջերերի երկարությամբ, թափու են: Հաճարի ծաղիկները միատուն են, պարզ և աննշան ծաղկապատով: Վարսանդավոր ծաղիկները խմբված են 2—4-ական՝ պատված են հատուկ ծածկոցով (կուպուլ պտղաթաս), որը պտղելու ժամանակ փայտանում է: Ծածկոցն արտաքուստ ունի հավելյալ տերեններ, որոնցից վերինները բզանք են, իսկ ստորինները՝ կանաչ և ավելի երկար: Յուրաքանչյուր ծածկոցի ներսում կա 2—4 պտղուղ, պտղուղը եռանիստ, սուր կողերով կաղին է: Հաճարի կաղինները ուտելի են, դրանք մեծ քանակությամբ պարունակում են լավորակ յուղ, որը քամում են ճղմելով: Սակայն հաճարի պլիավոր տնտեսական արժեքը նրա ամուր բնափայտն է, որն իր տված ջերմությամբ գրավում է առաջին տեղերից մեկը,

մեծ կիրառություն ունի ատաղձագործության մեջ, երկաթուղային կոճեր պատրաստելու համար և այլն։ Հաճարու բնորոշ ֆիզիոլոգիական առանձնահատկություններից մեկը նրա ստվերադիմացկունությունն է։ Բավական է նշել, որ հաճարու տերեւները կարողանում են դիմանալ մինչև 1/80 ուժի լույսի տակ։

Հայաստանում հաճարի անտառները տարածված են 900 մ.-ից մինչև 1900 մ, սակայն նրա զվարար զանգվածները 900—1600 մ սահմաններում են կենտրոնացած։ Այդ գոտին բնորոշվում է անտառի բնական լավ վերաճումով։ Այդ գոտում են կենտրոնացած չոր և խոնավ տիպի հաճարի անտառները։ Սուրալպիական անտառային գոտում, այսինքն՝ 1600—2000 մ ծովի մակերեսութից բարձր տարածված են խոնավ տիպի հաճարի անտառները։ Այդտեղ սերմերով վերաճումն անբավարար է կամ բոլորովին տեղի չունի։ Հաճարի անտառների հողերը հիմնականում անտառային-դարչնագույն հողերի տիպին են պատկանում։ Դրանք բնորոշվում են լավ արտահայտված հումուսային հորիզոնով, խոշորհատիկությամբ կամ ընկուղային կառուցվածքով և առանձին հորիզոնների միջև անորոշ անցումներով։ Չոր տիպի անտառներում հողերը համեմատաբար սակավազրու են, բավականին կմախքային։ Թարմ և խոնավ տիպի անտառներում հողերն ավելի լավ են զարգացած։ Լեռնալանջերի հողերի հղորության տատանումների կապակցությամբ խիստ տատանվում է նաև ծառերի որակը։ Հաճարի անտառները խիստ բազմազան են և շատ տիպեր ունեն։ Առանձնապես փոփոխական է այդ անտառների խոտային ծածկույթը։

Լավ արտահայտված ստրուկտուրա ունեցող հղոր և զարգացած կավախառն հողերում խոտային ծածկույթի մեջ տիրապետում է հոտավետ գետնաստղը (*Asperula odorata*)։ Այս տիպի հաճարուտները շատ տարածված են Հայաստանի հյուսիսային մասում, որտեղ դրանք աճում են դեպի հյուսիս դարձած համեմատաբար զառիկող լանջերին՝ 1200-ից մինչև 1700 մ բարձրության սահմաններում։ Այդ հաճարուտների միջավայրի պայմաններն աչքի են ընկույտ բարձր արտադրողականությամբ, և անտառի վերաճումն այդտեղ հաջող է։ Հոտավետ գետնաստղի հաճարուտներին հաճախ հաջորդում են դաշտավլուկի, շուղախոտի և պտերների հաճարուտները։

Համեմատաբար հզոր հումուսային հորիզոն ունեցող ավելի ծանր, կավային խոնագ և հարուստ հողերում շատ սովորական են՝ խոտային ծածկույթը ու տիբապետող հովազածետի (Cirsaea latetiana) հաճարուտները: Այս տիպը տարածված է լեռնային գոտում՝ 1000-ից մինչև 1300 մ բարձրության վրա դառիկող լանջերին: Հովազածետն այս տիպի հաճար միանգամայն կայուն բույս չէ: Ծառերի մեծ խոտության դեպքում խոտային ծածկույթը բուլորովին բացակայում է, իսկ երբ ծառածածկույթը որոշ չափով նոսրանում է, հանդես են գալիք անտառային զանազան լայնատերև խոտաբույսեր: Այս տիպի անտառը խիստ նոսրանալու դեպքում զարգանում է կիսամոլախոտային փարթամ խոտածծկույթը, որը խոչընդոտ է հանդիսանում բնական վերամանը: Այսպիսի հաճարուտների լուսամուտներում ոնչուրան (Sambarus eurus) հաճախ խիտ բուսուտներ է կազմում: Շատ սովորական է նաև մողին:

Քարքարոտ գորշ անտառային սակավազոր հողեր պարունակող չոր վայրերում հաճարի անտառների խոտային ծածկույթում տիբապետում են ցորենազգի բույսերը՝ դաշտավլուկը (Poa nemoralis) և շյուղախոտը (Festuca montana): 1000—1700 մ բարձրության վրա՝ ռելյեֆի բարձրադիր մասերում, ջրաբաժանների վրա և ամենաթեք լանջերին հանդիպում է դաշտավլուկային հաճարուտը: Հողն այստեղ սովորաբար թեթև կավախառն է, կմախքային, վատ արտահայտված կառուցվածքով, երբեմն թույլ պողպղացած: Դաշտավլուկային հաճարուտում ենթանտառ չկա, իսկ անտառային ցամքարը շատ փուխր է և խիստ անհավասարաշափ է ծածկում հողը: Խոտային ծածկույթն այստեղ թույլ է զարգացած: Քանի որ դաշտավլուկային հաճարուտում անտառային ցամքարը և խոտային ծածկույթը թույլ են զարգացած, այդ պատճառով էլ հողի վերին շերտը լվացվում է: Երբեմն հողի վերին հորիզոնը նույնիսկ միանգամայն լվացված է լինում: Այս տիպի հաճարուտում վերաճումը բավարար է տեղի ունենում:

Շյուղախոտային հաճարուտը հայաստանի հյուսիսային մասում բավականին հաճախ է հանդիպում՝ գրավելով դաշտավլուկային հաճարուտներին մոտիկ, բայց մասամբ ավելի խոնավ վայրեր: Այդ հողերը շատ նման են դաշտավլուկային հաճարուտի հողերին, միայն թե ըստ մեխանիկական կազմի ավելի ծանր:

հն, պակաս կմախքային և ավելի խիտ: Դաշտավլուկային հաճարուաց հանդիպում է 1000 մետրից մինչև 1800—1900 մետր բարձրության վրա, և այդ պատճառով էլ ծառերի որակը մեծ չափով տարբեր է: Դաշտավլուկային հաճարուառում բնական վերաճումը միանգամայն (բավարար է կատարվում:

Հաճարի անտառի մի հատուկ տիպ է պտերային հաճառութը: Նա հանդիպում է 1300—1700 մ բարձրության սահմաններում, հյուսիսային լանջերին, ուղիղի ցածրակիր մասերում: Հողերն այստեղ համեմատաբար հզոր են և հումուսով հարուստ: Հաճարի հետ միասին այստեղ հանդիպում են թեղի (Ulmus elliptica), բոխի (Carpinus betulus), սրատերև թղկի կամ լայնատերեկի (Acer platanoides), կովկասյան լորենի (Tilia caucasica):

Որոշ գեղգերում թեղին կազմում է տեսակների սոսավորակես 20—80 տոկոսը: Երբեմն ենթանտառում կղակի հանդիպում է կտակենին (Sambucus nigra):

Խոտային ծածկույթը հիմնականում կազմված է պտերից (գլխավորապես արու պտերից, Dryopteris filix mas), բայց շատ կամ քիչ քանակությամբ հանդիպում են նաև լայնատերև խոտաբույսեր: Բնական վերաճումը շատ թույլ է և հաճախ նույնիսկ բարորոտին տեղի չի ունենում:

Հաճարի անտառների միջև և նրանց եղբերին կղզիներով լայնորեն տարածված են կաղնու կախառն կաղնու անտառները և դրանցից առաջացած խմբավորումները:

Զուտ կաղնու անտառները աճում են համարյա բացառապես միջին և վերին գոտիների հարավային չոր լանջերին. իսկ խառն կաղնու անտառները հանդիպում են առավելապես արևմտյան և արևելյան լանջերին:

Կաղնու անտառների հիմնական՝ անտառ կազմող տեսակները երկուսն են՝ վրացական կաղնին (Quercus iberica) և արեվելյան կաղնին (Quercus macranthera): Արեկելյան կաղնին խոշոր ծառ է մինչև 20 մ բարձրության: Նրա տերևակիցները մնացող են, խոշոր, իսկ տերեկները տակից և կոթունի վրա խիտթափու: Այս տեսակի կաղնու միամյա ընձյւղները խիտ ծածկված են շեկապուն կարծ թափով: Վրացական կաղնին նորյապես խոշոր ծառ է մինչև 30 մ բարձրության: Ի տարբերություն արեկելյան կաղնուց՝ վրացական կաղնու տերևակիցները թափող

և և լրիվ հասունացած տերմաները մերկ են: Սա ավելի քսերու ֆիլ տեսակ է, քան արևելյան կաղնին: Մինչև 1400 մ բարձրության վրա հանդիպում են միայն վրացական կաղնու անտառներ, իսկ 1500 մ-ից վեր՝ բացառապես արևելյան կաղնու անտառներ: Իսկ 1400—1500 մ-ի միջև հաճախ կաղնու երկու տեսակն էլ հանդիպում են, և հաճախ հենց միևնույն տնկարքում: Կաղնու ամենատիպիկ անտառները տարածված են լոռում, Կիրովականի և Դիլիջանի շրջաններում, որտեղ դրանք հանդիպում են 1000-ից մինչև 1400—1600 մ բարձրության վրա: Կաղնու հետ միասին աճում են թղկիներ, բոխի և այլն: Կաղնու անտառի լուսաթուփանց ծածկույթը հնարավորություն է տալիս, որ խոտի ծածկույթը ուժեղ զարգանա: Խոտային ծածկույթի մեջ ընդհանուր առմամբ տիրապետող ցորենազգի բույսերն են, սակայն այստեղ շատ կան և տարածուած:

Երբեմն հյուսիսային լանջերին զարգանում են բոխու խառնուրդով և ավելի ստվերու ու բարձրացողուն խոտային ծածկույթով կաղնու անտառներ: Այսպես են, օրինակ, Թարսագետի (Կրասնոսելյակի շրջան) վերին հոսանքի անտառները: Անտառի ստվերու սաղարթի տակ փարթամ զարգանում են գտերները, անտառային բարձրացողուն խոտաբույսերը, մածուռների և քարաքոսների ծածկույթը:

Կաղնու խիտ տնկարքներում փուխը և անձիմ հողի վրա զարգանում են զանազան լայնատերև խոտաբույսեր: Ցորենազգի բույսերն այստեղ թույլ են զարգացած: Սակավախիտ և չոր կաղնուաններում հողերը ձիմուաված են լինում այլտեղ տիրապետող ցորենազգիների շնորհիվ: Երբեմն այլտեղ բավականին մեծ քանակությամբ բոշխեր են աճում:

Շատ յուրահատուկ են ժայռոտ վայրերում աճող կաղնուանները: Այստեղ իսկական հողերը ձեավորվում են միայն ժայռերի ծերպերում և մայր ապառի բեկորների արանքներում, և այդ պատճառով էլ խոտային ծածկույթը զարգանում է հատկածներով: Գերակշռում են մեզոֆիլ-ժայռային բուսականության ներկայացուցիչները: Շատ կան թփեր:

Ավելի ստվերախիտ լանջերին, որտեղ հողերը շատ խոնավ են և ավելի հզոր հումուսային հորիզոն ունեն, մարգու գործունեության հետեանքով կաղնին հեշտությամբ փոխարինվում է

բոխիով: Այդ փոխարինման պատճառը մի կողմից անտառահատումն է, մյուս կողմից անտառների ուժեղացած արածացումը: Բոխու անտառն ավելի լավ է դիմադրում արածելուն և, բացի այդ, տվյալ տեսակը, որպես պակաս արժեքավոր, կաղնուց քիչ է հատվում: Բոխին բավական մեզոֆիլ է և հողի փերաբերամբ պահանջնություն այդ պատճառով էլ կաղնուն նա փոխարինում է միայն լավ զարդացած և բավականին խոնավ հողերում:

Փոխարինման առաջին ստադիաներում կաղնու հետ խառնվում է հատ ու կենա բոխի: Այդպես են Հայաստանի հյուսիսային մասերում լայն տարածված բախու կաղնուտները: Խոտային ծածկույթին այստեղ ավելի հարուստ է և ավելի մեզոֆիլ, քան տիպիկ կաղնուտներում: Հայաստանի հյուսիսային ժամանակաշրջանում լայնորեն տարածված բախու անտառները կաղնին բախուվ փոխարինվելու հետևանք են:

Հատուկ տիպ են կաղմում ստորին լեռնային գոտու կաֆու կաղնուտները: Դրանք աճում են հարավարեւելյան և հարավարեւյան լանջերին և հանդիպում են 750-ից մինչև 1100—1200 մ բարձրության վրա: Կամի կաղնուտները երկնարկանի կամ եռահարկ խմբավորումներ են, որոնց մեջ առաջին հարկը կաղմում է վրացական կաղնին՝ խառն հացենու, թղկիների, բոխու և այլ տեսակների եղակի օրինակների հետ, երկրորդ հարկը կաղմում է կամի (Carpinus orientalis), իսկ երրորդը զանազան թփեր—հան (Cornus mas), ձապկի (Cornus austalis), դժնիկ (Rhamnus cathartica) և այլն:

Կաֆու կաղնուտները միայն սակավաթիվ վայրերում են պահպանվել և մեծ մասամբ փոխարինված են նրանցից առաջացած կաֆու անտառներավ: Այս վերջինները շատ տարածված են Իջևանի և Ալավերդու շրջաններում, որտեղ հանդիպում են 500-ից մինչև 1000 մ բարձրության վրա: Այդ անտառների հողերը սակավազոր են և անասունների կողմից արորված: Կաֆու անտառում միշտ էլ որպես խառնուրդ հոն է աճում: Այդտեղ եղակի հանդիպում են նաև վրացական կաղնու մացառներ: Ավելի սակավ հանդիպում են գաշտային թղկին (Acer campestris) և հացենին (Fraxinus excelsior): Մեզոֆիլ տիպի կաֆու անտառներում խոտային ծածկույթը լայնատերև խոտաբույսերից է կաղմված: Կա-

ժու չոր անտառներում գերակշռում են ցորենազգի բույսերը (կոմիլիասյան ռեգներիա և այլն):

Ստորին լեռնային գոտու կաղնու անտառների հետղարդաց ման հետագա ստաղիան են հանդիսանում կաֆու, ցաքի և մի շարք այլ թփերի բուսուտներ: Ծառատեսակներն այսուեղ աչքի են ընկնում ավելի թույլ կենսունակությամբ: Բացի հաղվաղեպ պատահող կաղնու մացառավոր օրինակներից, այդտեղ կարելի է նշել հոնը, զկեռը (*Mespilus germanica*), սղնու կամ ալոճի տեսակները (*Crataegus*), ծորենին (*Berberis*) և այլն: Շատ սովորական է ասպիրարակը (*Spiraea hypericifolia*): Խոտային ծածկույթի մեջ տիպիկ մարգագետնային՝ ձեռերին համահալասար շատ սովորական են նաև զուտ տափաստանային տեսակները: Այդտեղ անտառային խոտարույսեր համարյա չկան, սակայն կան թփուտների համար բնորոշ խոտային ձեռեր, ինչպես ռեգներիան է և այլն: Անասունների արածացութիւն, այդտեղ ավելի շատ է վնասում: Կաղնու և կաֆու անտառների վերջնականապես անհետանալու հետեանքով աճում են «շիրլյակի» տիպի թփուտներ:

Հայաստանի հյուսիսային մասի անտառների համար շատ բնորոշ են տեղատեղ հանդիպող սոնու անտառների վորքը պուրակները: Դրանք սովորաբար տարածված են 1000—1600 մ գուտում և շատ սակալ են ավելի վեր բարձրանում (Փամբակի ձորը Շահալի կայարանի, մոտ): Սոճին (*Pinus hamata*) Հայաստանում հանդիպում է փոքր կողյակներով՝ 0,1-ից մինչև 100 հեկտար տարածությամբ: Ամենամեծ սոճուտները գտնվում են Գյուղագարակի մաս (70 հեկտար), Եխսիմականում, Շահալի անտառատեսակներությունում (100 հեկտարից ավելի): Սոճուտները աճում են գլխավորապես հարավային և հարավ-արևմտյան լանջերին: Սոճու ամենաարելյան տնկարքը գտնվում է Հախումի (Հասանի) անտառային տնտեսությունում:

Հայաստանի սոճուտները երկու տեսակի են՝ չոր և խոտային: Չոր սոճուտը Հայաստանի հյուսիսային մասի սոճու անտառների ամենաարածված տիպն է: Նա աճում է ամենաչոր թեք ու հաճախ ժայռոտ հարավային կամ հարավ-արևմտյան լանջերին՝ 1000—1650 մ բարձրության սահմաններում: Այդտեղ հողային պայմաններն ամենապատճ են, քանի որ ժայռոտ լանջերին հողագոյացման միայն սկզբնական փուլերն են նկատ-

վում: Հենց ոք պարզ արտահայտված հողային ծածկույթ է ձևավորվում, սոճին գուրս է մղվում հաճարի, բոխի և այլ լայնատերև տեսակներով: Խոտային սոճուաները հանդիպում են լավ զարգացած և հողային խոնավ ծածկույթ ունեցող զառիկող լանջերին: Համեմատաբար հարուստ խոտային ծածկույթը կազմված է գլխավորապես մարդագետնային ձեերից: Խոտային սոճուտի պուրագիներ կան Գյուլագարակի և Դսեղի ձորերում (Լոռի), Դիլիջանից հարավ և այլն: Ընդհանրապես խոտային սոճուտներն ավելի քիչ են տարածված, քան չոր սոճուտները:

Հայաստանի հարավային մասում անտառների փոքրիշատե մեծ տարածություններ կան միայն Սյունիքում: Սյունիքում ժամանակակից անտառները պատմականորեն սերտ կապված են. Անդրկովկասի հարավ-արևելյան մասի երրորդական ժամանակաշրջանի անտառային բուսականության հետ: Հարեան Ղարաբաղի անտառների հետ միասին զիանք առաջացել են հիրկանական անտառներից, ձևափոխված լինելով չոր կիմայի և մարդու ներգործության հետեւանքով: Բազմաթիվ մնացորդային (ուելիկտային) ծառատեսակներ, օրինակ՝ ձելկվան մինչև այժմ էլ պահպանվել են Սյունիքի անտառային շրջաններում:

Սյունիքի միջին լեռնային գոտու հիմնական բուսականությունը վրացական կաղնուց կաղմված կաղնուուներն են: Սյունիքի կաղնու անտառներն աչքի են ընկնում այլ ծառատեսակների մեծ խառնուրդով: Ամենից հաճախ հանդիպում են բոխի, հացենի, հիրկանական թխկին, դաշտային թխկին, կովկասյան տանձենին, խնձորենին, թեղին, կեռասենին, արոսենին (Sorbus), արևելյան կաղնին: Ենթանտառը մեծ մասամբ լինում է շատ լավ զարգացած: Այլտեղ շատ սովորական տեսակներ են կաֆին, հոնը, ճառկին, իլենին (Eryngium), զկեռը, կովկասյան ցախկեռասը, մասրենին (Rosa), ասպիրակը և այլն: Կաղնու անտառի սակագաստովեր լինելը նպաստում է խայտարղետ խոտային ծածկույթի առաջ զարգացմանը: Ավելի խիտ տնկարքներում ամենամեծ զերը անտառային խոտարույսերին է պատկանում: Մամուային ծածկույթը լավ է զարգացած: Կաղնու լուսավոր տնկարքներում շատ կան մարդագետնային և տափաստանային ձեեր: Խոտարույսերը, որոնք պատահում են խիտ ան-

տառների միայն եզրերին, այդուղի կազմում են խոտային ծած-կույթի բնորոշ տարրեր:

Կլիմայական և հողային պայմանների վատացմանը զու-զընթաց ստորին լեռնային գոտում վրացական կաղնու տնկարք-ներն աստիճանաբար պակասում և փոխարինվում են արաքսյան կաղնու լուսավոր անտառներով: Դրանք տարածված են Ղափա-նի և Մեղրու շրջանների ստորին անտառային գոտում: Արաք-սյան կաղնին Հայաստանի կաղնիներից ամենաքսերոֆիլին է: 'Իս մի փոքր ծառ է, որ ամենաանպատճ պայմաններում հաճախ թփային ձերն է մոտենում: Արաքսյան կաղնու տնկարքները պարտեզային տիպի ցածրահասակ և նոր խմբավորումներ են: Հողերն այտեղ մեծ մասամբ խիստ կմախքային են և խճու ծառերից և թփերից սովորական են ճապկին, վրացական թըխ-կին, աստիրակը, սղնիները, հացենին, փաշնին, դրախտածառը, ցաքին, կիլլորու (Ligustrum), կոլուտեան (Colutea), ցրպտկին: Սակավ չէ հանգիպում նաև Ֆենցլի նշենին: Ավելի չորային լան-ջերին շատ հաճախ հասմել է հանգիպում: Տիպիկ գելքերում խոտային ծածկույթների մեջ անտառային տարրերը շատ քիչ են: Մեղրու շրջանում կաղնու անտառների ծայրագույն հարավային սահմանում խոտային ծածկույթի միջ շատ կան ֆրիզանոփիդ բու-սականության տարրեր: Քսերոֆիլ կաղնուտների շեղումը տա-լիս է շիրլակ: Անտառի հետ զարգանալու և շիրլակի վերածվելու փուլերից մեկը կտղնու դրախտածառի տնկարքներն են հանգի-պանում:

1000-ից 1900 մ բարձրության վրա, առավելապես հյուսի-սային լանջերին, տարածված են կաղնու բնիս և հաճախ բո-խու մեղոփիլ անտառները: Դրանք առանձնապես լավ են արտա-հայտված լեռնանտառային ծանը շագտնակագույն հզոր հողեր ունեցող զառիկող լանջերին: Բոխու անտառները սովորաբար զուրկ են ենթանտառից: Խոտային ծածկույթն այդուղի զուտ աեղական խոտաբույսերից է կաղմլած: Սյունիքում մի փոքր պակաս են տարածված բոխու խոնավ անտառները: Այդաեղի փարթամ խոտային ծածկույթը գլխավորապես պտերներից է կազմված:

Մոտավորապես 800—1000 մ բարձրության վրա տարած-ված են կաղնու բնիս անտառները: Մրանց ենթանտառը կազմ-

ված է հոնից, կաղինից և կաժուց: Խոտային ծածկութիւն մեջ  
մարգագետնային ձեռքն առատ են:

Եատ տեղերում բոխուն մեծ քանակությամբ հացենի է  
խառնվում: Հացենութիւնու անտառների կղզիները շատ տա-  
րածված են մանավանդ միջին լեռնային գոտում:

Հայաստանի հարավային մասի մնացած շրջաններում պահ-  
պանվել են արեելյան կաղնուց կաղմված անտառների առանձին,  
մեծ մասամբ շատ փոքր, կղզիներ: Դրանք Հայաստանի հարա-  
վային մասում երբեմնի լրացն տարածված կաղնու անտառների  
մնացորդ (ռելիկա) են: Հին պատմագիրների վկայությունները,  
ինչպիս նաև անտառների մնացորդները, շատ տեղերում տարած-  
ված բազմաթիվ թփուտները անտառային տարրերի առկայու-  
թյամբ և շատ ուրիշ փաստեր ասում են, որ ներկայիս անտա-  
ռազուրկ երկրի մեծ տարածություններ գեռ ես պատմական ժա-  
մանակաշրջանում ծածկված են եղել անտառներով:

Սակայն ավելի հին ժամանակներում ևս անտառները չեին  
կարող ամբողջությամբ ծածկել մեր երկիրը: Բազմաթիվ հրա-  
բեխային չոր սարահարթեր հավանաբար երրորդական ժամա-  
նակաշրջանից սկսած երբեք անտառներով ծածկված չեն եղել:  
Այդ առանձնապիս վերաբերում է Շիրակի սարահարթին: Ներ-  
կայումն երկրի այդ մասի կլիման շատ ավելի նպաստավոր է  
տափաստանային, խոտային, քան թե անտառային բուսականու-  
թյան զարգացման համար: Տեղութիւնն այդտեղ տարվա ընթաց-  
քում խիստ անհամաշխափ են բաշխվում, դրանք լինում են զըլ-  
խավորապես աճնեցողության (վեղետացիայի) ընթացքում, իսկ  
աշնանն ու մանավանդ ձմռանը այդտեղ լինում է երաշտ, մի-  
հանգամանք, որ անպայման նպաստավոր չէ անտառային բուսա-  
կանության զարգացման համար: Դրան ավելանում է և այն, որ  
ջերմաստիճանը տարվա ընթացքում մեծ տատանումներ է տա-  
լիս, նույնպիս և քամիների բնույթը, իսկ որոշ վայրերում նույ-  
նառացին փոթորկիները: Այդպիսով, հանգում ենք այն եղբա-  
կացության, որ ստեղային բուսականությունն այդտեղ  
երկրորդային, է և ոչ թե իր տեղում զարդացած առաջնային, և  
դեռ նախապատմական ժամանակներում կաղմել է տեսարանի  
բնորոշ կողմը: Չորրորդական ժամանակաշրջանի հակայական  
լավային ժայթքվածքներն այդտեղ լեռնա-ստեղային լանդ-

շաբտի առաջացման համար վճռական դեր են խաղացել Լավաշյին ժայթքվածքները նպաստել են ստեղային լանդշաֆտի ձևավորմանը նաև Սևանա լճի ավագանում նոր բայազետի ըրջանում: Այգապիտով, շրջաններ կան, որտեղ նույնիսկ նախապատմական ժամանակներում անտառ չի եղել: Եվս առավել անտառներից զուրկ են եղել Արաքսի միջին հովտի անապատներն ու կիսաանապատները:

Արեգունու լանջերին լայնատերեկ անտառների մնացորդները հանդիպում են Սևանի լճափին Թաք-աղաջ հրվանդանի մոտ Արտանիշի (Աղաթափայի) թերակղում և Բաբաջան գյուղի ըրջակայքում: Դրանք գտնվում են 1980—2290 մ բարձրության վրա, որտեղ կան նաև ստեղներ և գիրու նուրանտառներ: Ամենամեծ զանգվածները տեղավորված են Բաբաջան գյուղից գեղի հարավ-արևելք Շամբերդ և Արքիլիս ձորերում: Սակայն լավ պահպանված անտառամասեր ներկայումս քիչ են մնացել: Անտառներն այդտեղ մեծ մասամբ մացառային բնույթուննեն և աչքի են ընկնում երիտասարդ կաղնիների առատությամբ:

Էլ ավելի խիստ են հետզարգացած Արտանիշ թերակղուու անտառների մնացորդները: Դրանք թփային մացառի բնույթունուն և այլս կաղնի չեն պարունակում: Թփային մացառուտները հերթակայում են գագերի ստեղների և արտօւճի գիճուտների հետ: Մացառներում ամենից հաճախ հանդիպում է ասպիրակը:

Կաղնու անտառների ռելիկտային կզբիները ցրված են Հայաստանի հարավային մասի բազմաթիվ այլ տեղերում: Մի բավականին մեծ զանգված գտնվում է Վայքում՝ Կարմրաշեն և Վուշչի գյուղերի միջև, 1500—2500 մ բարձրության վրա: Վայքի անտառներն ընդհատ են և աչքի են ընկնում անտառային բացատների առատությամբ: Կաղնին այդտեղ մեծ մասամբ ցածրացատների առատությամբ: Կաղնին այդտեղ մեծ մասամբ կարահատակ է և հաճախ խիտ ու անընդհատ ծառածածկույթ չի կաղմում:

Բավականին հաճախ հանդիպում են տանձենու տեսակներ, ինձորենի, արոսի և այլն: Որոշ տեղերում շատ է հանդիպում հախենին: Ենթանտառում գերակշռում է գերամաստին (Viburnum Lantana): Մի փոքր պական են հանդիպում իլինին և մասրենու (Lantana): Ավելի նոսր տեղաբնիքներում և անտառեզրերին շատ տեսակները: Ավելի նոսր տեղաբնիքներում և անտառեզրերին շատ կան ասպիրակ, մասրենու, դժնիկի, սզնու տեսակներ և այլն:

Խոտային ծածկույթի մեջ, բացի տիպիկ անտառային ձևերից, շատ կան և մարգագետնային ու ստեղային տարրեր:

Կաղնու անտառի մի փոքր, բայց լավ պահպանված ռելիկտային կղզի կա կեթուս գյուղի մոտ՝ Վեդի գետի ավագանում: Այդ կաղնուտում որպես խառնուրդ շատ հացենի կա: Տեղատեղ հանդիպում են կաղնու-հացենու տնկարքներ: Շատ կան կաղնու և հացենու բարձրաբուն ծառեր, որոնք հաճախ միանգամայն փակ ծառածածկույթ են առաջացնում: Համեմատաբար ավելի խիտ տնկարքների ենթանտառը կաղմված է գլխավորապես կովկասյան ցախիեռափից և գերամաստու, իլինու և այլ տեսակներից հաղվագյուտ օրինակներից: Սակավախիտ տնկարքներում շատ կան դժուիկ, գերամաստոի, ցրտակի, ասպիրակ և այլն: Նոսր արևակարքներում և անտառեզրերին՝ առաջին հարկում հանդիպում են մեծ թվով խնձորենի, հացենի, վրացական թխկի:

Վեդի գետի հովառում կաղնու անտառից ցած, ավելի խոնավ լանջերին յուրահատուկ «պտղատու» անտառ է զարգանում, որի մեջ տիրապետող են հանդիսանում փայտացողուն վարդազգիները:

Հայաստանի հարավային մասի համար շատ բնորոշ է Բյաւրականից վերև՝ 1800-ից մինչև 2300 մ բարձրության վրա գտնվող փոքր անտառը: Այդտեղ արևելյան կաղնին անընդհատ ծածկույթ չի կազմում, այլ ընդմիջվում է հետանտառային մարգագետինների և գագեր պարունակող լեռնային ստեպների հատվածներով: Ենթանտառում շատ թփուտներ կան: Տեղակաղնու կաղնու խիտ տնկարքները վկայում են, որ Բյուրականի անտառն առաջներում մեզոֆիլ բնույթ է ունեցել:

#### 7. ՍՈՒԹՅԱՂԻԱԿԱՆ ԲՈՒԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Անտառային գոտուց վեր գտնվում է ցրտակայուն («կրիո-ֆիլ») նոսրանտառի նեղ շերտ, որը անցումային փորմացիա է անտառից գետի ստորին-ալպիական բուսականությունը: Անցյալում ցրտակայուն նոսրանտառը հավանաբար եղել է անտառային գոտու վերին սահմանը եղերող փոքրիշատե անընդհատ շերտ: Սակայն այդ նոսրանտառը մարդու գործունեության հետահանքով շատ տնդերում ոչնչացվել է, իսկ անտառի վերին սահմանն էլ մեծ չափով իջել:

Հայաստանի ցրտակայուն նոսրանտառը հանդիսանում է

կամ հաճարի և կեշու կուտանտառ կամ կեչու և կազնու նոսրանտառ:

Հայաստանի հյուսիսային մասի ցրտակայուն նոսրանտառները կազմված են ցածրիկ (3—5 մ), կոշտաշատ և սակավաթիւն դասավորված ծառերից: Խոտային ծածկույթը բարձրախոսուքի տիպի է, երբեմն սուրալպիական մարգագետնի տարրերի հետ խառը: Անտառ կազմող հիմնական տեսակներն են՝ Լիտվինովի կեշին (Betula Litwinowii), բարձրեւնային թխին (Acer Trautvetteri), արոսին (Sorbus aucuparia), արևելյան կաղնին և մասամբ ավելի ցածր տարածված թեղին (Ulmus elliptica). Թփերից շատ սովորակազն են՝ հաղարջը (Ribes), գերամարտին (Viburnum orientale), կովկասյան ցախկեռասը (Lonicera caucasica): Առավել խոնավ պայմաններում աճում են թխկու-թեղու և մի փոքր վեր՝ կեչուարոսի խմբավորումներ. իսկ ամենաչոր պայմաններում տարածված են կաղնու նոսրանտառներ: Այդ խմբավորումների միջև կան բոլոր անցումնեյին տեսակները:

Սյունիքում անտառների գոտին եղերված է կաղնու նոսրանտառով: Որպես կանոն, այդտեղ ենթանտառ չկա, իսկ խոտային ծածկույթը լավ է զարգացած և կրում է կիսաբարձրախոտքային ընույթ:

Հայաստանի հյուսիսային մասի որոշ տեղերում (օրինակ, Մայմեխ լեռան վրա՝ Կիրովականի մոտ) կան բարձրախոտքի փոքր տեղամասեր, որոնք կաղնում են՝ խոտային ծայր աստիշի փոքր լեռագագաթներում և հետաքրքրական խմբավորում: Բարձրանան յուրահատուկ և հետաքրքրական խմբավորում: Բարձրախոտքը զարգանում է անտառի վերին եղրի երկարությամբ: Այդ խմբավորումն աչքի է ընկնում խոտաբույսերի հսկայական համեմատավոր զանգվածի բացառիկ փարթամ զարգացմամբ: Իսկով և խոտային զանգվածի բացառիկ փարթամ զարգացմամբ: Ի տարբերություն իսկական մարգագետնային ըլուսականությունից, այդտեղ ենթախոտք համարյա չկա, իսկ ձիմացման պրոցեները բոլորովին արտահայտված չեն: Բարձրախոտքի խոտաբույսերի բույսերը անումը պայմանավորվում է ձյան ուշ հալքով: Գուշանանային բուսականությունը զարգանում է խոնավությամբ հազեցած հողում՝ օդի համեմատաբար բարձր ջերմաստիճանի ժամանակ: Սակայն բարձրախոտքային խմբավորումները հայտագագաթներում այնպես լավ չեն զարգացած, ինչպես, օրինակ, Վրաստանում այնպես լավ չեն զարգացած,

տանի արեմտյան մասում, Հայաստանում դրանք ոելիլոտային  
ընույթ ունեն:

Հայաստանում ոելիլոտային բնույթ են կրում նաև լազուտ-  
ները կամ կոմարուտները: Դրանք կովկասյան լաշու կամ կոմա-  
րի (Rhododendron caucasicum) թփեր են, որոնք փոքր կղզի-  
ներով հանդիպում են Հայաստանի հյուսիսային մասի արեմը-  
տյան շրջաններում: Կովկասյան լաշին կամ կոմարը կարձմիկ թուփ  
է, մշտագալար, կաշեկերպ երկարավուն տերևներով: Ծաղիկ-  
ները շատ գեղեցիկ են, ունեն խոշոր, գեղնավուն-սպիտակ կամ  
երբեմն թիթեակի վարդագույն կամ կարմրավուն պսակ: Կոմա-  
րըն աճում է սուբարպիտիկան գոտու վերին շերտում և մասամբ  
ալպիական գոտում և սովորաբար պատահում է հյուսիսային  
ավելի խոնավ լանջերին: Ներկայուժմաս կոմարի թփուտները կան  
Բաղրումի (Բզովդալի) լեռնաշղթայի հյուսիսային լանջին (ավել-  
ի լավ թփուտներ՝ Թողոր լեռան վրա), Փամբակի լեռներում՝  
Ֆիոլետով գյուղին մոտիկ և խոնավ լեռների արենելյան լան-  
ջերին: Հայաստանում կոմարն իր գոյության վերջին օրերն է  
ապրում:

Հայաստանի սուբարպիտիկան գոտու համար ամենից բնորոշ  
խմբավորումները զանազան տիպի մարգագետիններն են: Այդ  
մարգագետիններն այսուեղ երկրորդային են և առաջ են եկել  
անտառների և նոսրանտառների տեղում: Հայաստանի անտառա-  
յին շրջաններում բարձրլեռնային մարգագետինների ստորին  
սահմանը բավական խիստ է սահմանագծված, մինչդեռ անտա-  
ռագուրկ շրջաններում՝ պարզ չէ արտահայտված. այսուղ մար-  
գագետիններն աստիճանաբար անցնում են զանազան տիպի  
տափաստանային բուսականության: Սուբարպիտիկան կամ սու-  
բինալպիտիկան մարգագետինների հիմնական տիպը կազմում են  
առաջատարապիտիկ մեզափիլ մարգագետինները, որոնք աչքի են ընկ-  
նում բավականին բարձր խոտակացքով: Շատ տիպիկ տարախո-  
տային մեղոֆիլ մարգագետիններ կարելի է դիտել կոսում, եր-  
բովականի շրջանում և Հայաստանի հյուսիսային մասի այլ տե-  
ղերում: Դրանք լավ զարգացած են Սևանա լճի ավազանի ավել-  
ի խոնավ հյուսիսարեմտյան մասում, որտեղ աճում են սեահո-  
զանման լեռնաշարպագետնային հողերում: Հայաստանի շատ  
վայրերում, մեղոֆիլ տարախոտային մարգագետիններն ավելի

քսերոֆիլ դառնալու հետևանքով՝ զարգանում են սուբալիկական մարգագետինների զանազան այլ տիպեր: Այդ պըսցեսի արդյունքն են հանդիսանում Հայաստանի հարավային մասի ավելի չուրային շրջաններում լայն տարածված զարհազգի տարախոտային սուբալիտական մարգագետինները: Դրանք առավել բնորոշ են վայքում և Սյունիքում:

Հայաստանում լայն տարածված են ցորենազգիների սուբալիտական մարգագետինները: Դրանք զարգացած են փոքրի շատեւ շագանակագույն լեռնա-մարգագետնային չոր հողերում: Հայաստանի ցորենազգիների մարգագետինները բույսերի տեսակային կազմով շատ բազմազան են:

### Տ. ԱՐՊԻԱԿԱՆ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի լեռների ամենաբարձր կոտիները զբաղված են բարձրլեռնային կամ ալպիական բուսականությամբ: Ինչպես այլ երկրներում, այնպես էլ Հայաստանում ալպիական գոտին գտընվում է անձրևային ամպերի գոյացման գոտուց շատ վեր. այդ պատճառով էլ ամառն այդտեղ տեղումներ նկատելի կերպով տվելի քիչ են լինում, քան սուբալիտական գոտում: Դա կապված է այն երկութիւն հետ, որ լեռներում տեղումների քանակությունը գեղի վեր աճում է միայն մինչև մի որոշ միջին բարձրություն և այնուհետև պակասում է: Իսկ նոսր օդի մեծ թափանցկության շնորհիվ, արեկի լուսավորման ուժը (հետեապես և գոլորշիացումը) մեծանում է: Ամենաշատ տեղումների բարձրությունը համընկնում է այն մակարդակի հետ, որտեղ գոլորշիներն սկսում են խտանալ: Զյան հալքը և գարնանային բուսականության զարգացումը սկսվում է մայիսին, իսկ մշտական ձյուների (նիվալ) շերտում նույնիսկ հունիսին: Վեգետացիոն շրջանը 2—3 ամիս է տևում և սովորաբար սեպտեմբերին է ավարտվում: Զերմաստիճանը վեգետացիոն շրջանում հաճախ խիստ ընկնում է, երբեմն հույնիսկ օծից ցած: Ալպիական գոտու կիման է համար շատ բնորոշ է, որ հողն ավելի տաք է, քան օդը. դայի համար շատ բնորոշ է, որ առեն ուժեղ է լուսավորում և հողը բացարկում է նրանով, որ արեն ուժեղ է լուսավորում և հողը բացարկում է առանում: Դրա հետ միասին այդտեղ նկատվում է խիստ է տաքանում: Դրա հետ միասին այդտեղ նկատվում է հողի ցերեկվա և գիշերվա ջերմաստիճանների միջև զգալի տար-

բերություն, որը գիշերվա ուժեղ սառեցման հետևանք է:

Ալպիական գոտում հողադրոյացման պրոցեսները պայմանավորվում են այստեղ տիրապետող ցածր ջերմությամբ և չափավոր տեղումներով: Այս դուռը լայն տարածված ժայռոտ լանջերին ամենին գոյություն չունի հողային ծածկույթ: Հողագոյացման սկզբնական ստադիաները ընթանում են միայն ժայռերի ճեղքերում և քարերի արանքում, որտեղ մասրանող է կուտակվում և խոտային քարձիկները նպաստում են հումուսի առաջացմանը: Հողային ծածկույթի առաջացման համար բավականին աննպաստ պայմաններ են ներկայացնում: Նաև բազմաթիվ ժարացրութերը: Միայն ամենից բատ ճիմակալած քարացրոնքների վրա է, որ նկատում ենք թույլ արտահայտված հողային հորիզոն, բայց եթե ժայռերի և քարացրոնքների գեռ չկայունացած և շարժական ուղղելիք, որտեղ տիրապետում են մեխանիկական հողմնահարման պրոցեսները, աննպաստ է անընդհատ հողային ծածկույթ գոյանալու համար, ապա ձյան շերտերի ներգործության տակ գտնվող կայունացած ուղղելիք ունեցող լանջերին հողը քիմիական ուժեղ հողմնահարման է ենթարկվում: Այսպես զարգանում են լիոնամարդագետնային հատուկ հողեր, որոնք իրենց որոշ գծերով ճահճային հողերին են նմանվում: Ցածր ջերմությունը հնաբավորություն չի տալիս այլական հումուսային հզոր հորթերն առաջանալուն, և բուսական զանգվածը տորֆի է վերածվում: Սովորաբար հյուսիսային և հարավային լանջերի հողերը խիստ տարբեր են:

Ալպիական բուսականության ուղղաձիղ սահմանները հայատանի դանագան կլիմայական շրջաններում տատանվում են՝ նայած ջերմության և խոնավության տարբեր պայմաններին: Հայաստանի հյուսիսային ավելի խոնավ ու գով մասում ալպիական բուսականությունը սկսվում է 2700—2800 մ բարձրության վրա: Սևանի ավաղանում (արեմայան, հարավային և արևելյան ափերը) սկսվում է 2800—2900 մ և ավելի բարձր, իսկ վայրեւմ և Զանգեզուրում՝ սովորաբար 2900—2950 մ-ից բարձր:

Բարձրեռնային օդի մեծ նոսրությունը և զրա հետ կապված ցածր ջերմությունը, ուժեղացած գոլորշիացումը, ջերմության ու ցրտի, ինչպես նաև խոնավության և չորության արագ փոփոխությունները և, վերջապես, արեի լույսի մեծ պայծառու-

բոշ է տերեների, ծաղիկների և պտուղների արագ զարգացումը՝ եղանակի անկայունությունը, միջատների համեմատաբար փոքր թիվը և դրա հետեանքով առաջացող փոշոտման անապահովությունը պայմանավորում են բույսերի վաղ ծաղկում, վեգետատիվ օրգանների համեմատությամբ ավելի խոշոր ծաղիկներ (բողբի՝ Gentiana, գնարբուկ՝ Primula և այլն), ծաղիկների հոտի ու գույնի ուժեղացում, ինքնափոշոտման լայն տարածում։ Ալպիական բույսերի մեծ մասը բազմամյա են։ Քանի որ վաղ ցրտերի պատճառով սերմառաջացումը միշտ էլ ապահովված չէ, ուստի ալպիական բույսերը շատ հաճախ լավ զարգացած վեգետատիվ բազմացման ընդունակություն ունեն։ Ալպիական բույսերի շատ հետաքրքրական առանձնահատկությունն է նաև այն, որ գրանք սառչելու նկատմամբ շատ կայուն են։ Երբեմն, երբ ջերմությունը դիշերը՝  $0^{\circ}$ -ից իջնում է, որոշ ծաղիկների պսակները սառչում և ապակու նման փխրուն են դառնում, բայց արեւի ճառագայթների ազդեցության տակ գրանք արագ ջերմանում, հարլում են և ծաղիկները նորմալ կերպով շարունակում են աճել։

Ալպիական բույսերը սովորաբար շատ ցածր խոտակացք են առաջացնում։ Լավ զարգացած հողում նրանք ամբողջովին ծածկում են գետինը, մինչդեռ ժայռերի, քարացրոնքների վրա և քարքարոտ ու խճոտ լանջերին նրանք իրարից փոքր ի շատե հեռու են գտնվում և անընդհատ խոտակացք չեն կազմում։ Ալպիական բուսական խմբավորումների ընույթն ուժեղ չափով կախումն ունի ուղղաձիգ բարձրությունից (ծովի մակերեսույթից հաշված), լանջի էրսպողիցիցից, հողից, խոնավությունից և միջավայրի մյուս գործոններից։ Նայած աճման պայմաններին՝ ալպիական դուռը պատահում են զանազան բուսական խմբավորումներ։

Ալպիական բուսականության ամենաբնորոշ տիպը՝ «գրգիրն» են։ Դրանք աճում են թեթևակի ցածրադիր տեղերում, որտեղ հողը լավ զարգացած և բավականին խոնավ է։ Գորգերը կազմված են շատ ցածր, թղուկ երկշաքիլ բույսերից՝ ամբուների արժատամերձ վարդակով։ Դրանց ծաղիկները խոշոր են ու շատ վառ գույներ ունեն։ Ցորենազգի բույսերն այդտեղ ենթակա գեր են խաղում և միայն աննշան ճիմ են առաջացնում։ Վարդակավոր ձեերի ադատության հետեանքով խոտակացքը ստացվում է շատ

խիտ և միայն մի քանի սանտիմետր բարձրությամբ։ Հողը մեծ մասամբ լինում է լիվլ ծածկված, որովհետև շատ երկարիլների արմատային սիստեմները և ընձյուղները, խիտ ճյուղավորվելով կազմում են ծածկույթ, որը հիշեցնում է ցողենազդիների առաջացրած խսկական ճիմը։ Հայաստանի տիպիկ ալպիական գորգերն աչքի են ընկնում մեծ խայտաբղետությամբ և մողայիկությամբ, այդ պատճառով էլ բուսականությունն այդտեղ արևելյան գույնզգույն գորգի տպավորություն է թողնում։

Լավ զարգացած գորգերը հանդիպում են Հայաստանի ամենամեծ լեռնային զանգվածների զագաթների շրջաններում (Խոնավ լեռներ, Արագած, Գեղամա լեռներ և այլն)։ Դրանք աճում են մեղոսելյեփի թեթևակի ցածրադիր տեղամասերում, որտեղ գոյցել են խոնավ և լավ զարգացած շագանակագույն լեռնամարգագետնային հողեր։ Ամենատիպիկ և ամենալավ զարգացած գորգերը հանդիպում են սառցագաշտային գոգերի հատակներում։ Վարդակակիր բույսերից Հայաստանի գորգերում ամենամեծ դերը խաղում են եռատամ զանգակիկը (*Campanula tridentata*) և հաստակտուց ոջլախոտը (*Pedicularis crassirostris*), երբ միկրոռոելյեփում գերակշռում են ցածրադիր տեղամասերը, այդ գեպքում ոչլախոտն ավելի է առատանում։ իսկ հակառակ գեպքում՝ երբ գերակշռում են բարձրադիր տեղամասերը, տիրապետող զանգակիկն է գառնում։

Սևանի (Շահզաղի) լեռնաշղթայում, Վայքում և Սյունիքում ալպիական գորգերը շատ ավելի թույլ են զարգացած և մեծ մասամբ հատվածներով են հանդես գալիս։ Այդտեղ տիպիկ գորգերին համահավասար հաճախ պատճում են «քարքարոտ մարգագետներ»։ Դրանք շատ ավելի քսերոփիլ են, քան իսկական գորգերը, իրենց կազմի մեջ պարունակում են բաղմաթիվ թավոտ ձևեր և աճում են մանրախիճ, հաճախ քարքարոտ և պակաս խոնավ հողերում։ Հայաստանի հարավային մասի քարքարոտ մարգագետները հիմնական կենսական ձևերի ընույթով և ֆլորիստիկ կազմով խիստ մոտենում են իրանի ալպիական բուսականությանը։ իսկ Վայքում և Սյունիքի լեռնաշղթայի հարավային մասում՝ միանգամայն նման են իրանականին։ Հայաստանի հյուսիսային մասում քարքարոտ մարգագետները տեղադիր բավականին լայն են տարածված, բայց այդտեղ դրանք

շատ պակաս քսերոփիլ են: Քարքարոս մարգագետիններում հաճախ տիրապետող բույսը լինում է սիրալդիան (Sibaldia). այդ հանգամանքին շատ զեպքերում նպաստում է անտառների արածացումը:

Ալպիական մարգագետինները, ի տարբերություն գորգերից և քարքարոս մարգագետիններից, կաղմած են ոչ թե երկարիներից, այլ ցորենազգի բույսերից և հազվադիպ՝ բոշխերից: Դրանք աճում են հարթ կամ բարձրագիր տեղամասերում, որտեղ գրյացել են լավ զարգացած և չափավոր խոնավ լեռնամարգագետնային հողեր: Հիմնական և ամենատարածված տիպը կաղմում են ցորենազգիների ալպիական մարգագետինները: Հումուսի հղոր շերտ ունեցող լավ զարգացած հողերում ցորենազգի բույսերը կազմում են խիտ ծածկույթ, որը խանգարում է տարախոտերի զարգացմանը: Հիմնական և սկզբնական տիպերում տիրտպետում են ցորենազգի բույսերը, որոնք ունեն առավել մեղոֆիլ տիպի հմակալում: Ուժեղ արածացման հետևանքով արածացման նկատմամբ պակաս դիմացկուն, մեզոփիլ տիպի հմակալում տփող ցորենազգի բույսերը փոխարինվում են ավելի դիմացկուն, քսերոմորֆ տիպի հմակալում տփող տեսակներով: Ավելի չոր լանջերին ցորենազգիների մարգագետինները փոխարինվում են բոշխաշյուղախոտային մարգագետիններով: Շատ լանջերին բոշխային մարգագետիններ են կաղմում: Ճմակալման բնույթով և էկոլոգիական այլ առանձնահատկություններով բոշխաշյուղախոտային մարգագետիններին հարակից են նարդուսային մարգագետինները: Դրանք հանդիպում են փոքրիշատե խոնավ հողեր ունեցեղ թեթեակի-ցածրագիր տեղամասերում և սովորաբար հյուսիսային լանջերին: Թեև նարդուսային մարգագետինները որոշ զեպքերում սկզբնական բուսականություն են հանդիսանում, առաջ դրանց ներկայիս լայն տարածումը (մանավանդ Հայաստանի հյուսիսային մասում) սերտ կերպով կազմած է ուժեղ արածացնելու հետ: Նարդուսային մարգագետիններում համարյառացառապես տիրապետում է նարդուսը (Nardus stricta), որը ճնշում է ինչպես երկարդիների, այնպես էլ մասամբ ցորենազգիների զարգացումը:

Ալպիական գոտում շատ տարածված են ժայռերը, փլվածքներն ու քարացրոնքները: Ժայռերի բուսականությունն աղքատ

շատ պակաս քսերոփիլ են: Քարքարոտ մարդագետիններում հաճախ տիրապետող բույսը լինում է սիբալդիան (Sibbaldia). այդ հանգամանքին շատ զեպքերում նպաստում է անտառների արածացումը:

Ալպիական մարգագետինները, ի տարրերություն գորգերից և քարքարոտ մարդագետիններից, կազմված են ոչ թե երկարիներից, այլ ցորենազգի բույսերից և հազվադեպ՝ բոշխերից: Դրանք աճում են հարթ կամ բարձրագիր տեղամասերում, որտեղ գոյացել են լավ զարդացած և չափավոր խոնավ լեռնամարգագետնային հողեր: Հիմնական և ամենատարածված տիպը կազմում են ցորենազգիների ալպիական մարգագետինները: Հումուսի հզոր շերտ ունեցող լավ զարդացած հողերում ցորենազգի բույսերը կազմում են խիտ ծածկույթ, որը խանգարում է տարախոտերի զարդացմանը: Հիմնական և սկզբնական տիպերում տիրտաղետում են ցորենազգի բույսերը, որոնք ունեն առավել մեղոֆիլ տիպի ճմակալում: Ուժեղ արածացման հետևանքով արածացման նկատմամբ պակաս զիմացկուն, մեզօֆիլ տիպի ճմակալում տվող ցորենազգի բույսերը փոխարինվում են ավելի զիմացկուն, քսերոմորֆ տիպի ճմակալում տվող տեսակներով: Ավելի չոր լանջերին ցորենազգիների մարդագետինները փոխարինվում են բոշխային մարգագետիններ են կազմում: Ճմակալման բնույթով և էկոլոգիական այլ առանձնահատկություններով բոշխայշուղախոտային մարգագետիններին հարակից են նարդուսային մարգագետինները: Դրանք հանդիպում են փոքրիշատե խոնավ հողեր ունեցել թեթևակից-ցածրազգիք տեղամասերում և սովորաբար հյուսիսային լանջերին: Թեև նարդուսային մարգագետինները որոշ զեպքերում սկզբնական բուսականություն են հանդիսանում, առաջ դրանց ներկայիս լայն տարածումը (մանավանդ Հայաստանի հյուսիսային մասում) սերտ կերպով կազմված է ուժեղ արածացնելու հետ: Նարդուսային մարգագետիններում համարյա բացառապես տիրապետում է նարգուսը (Nardus stricta), որը ճնշում է ինչպես երկարիների, այնպես էլ մասամբ ցորենազգիների զարգացումը:

Ալպիական գոտում շատ աարածված են ժայռերը, փլվածքներն ու քարացրոնքները: Ժայռերի բուսականությունն աղքատ

է, անկայուն և հաճախ կազմված է բուսաշխարհագրական տեսակետից հազվագյուտ և շատ հետաքրքրական տեսակներից: Ալպիական գոտու ժայռային տիպիկ բույսերը պատկանում են «բարձանման բույսերին»: Ի տարբերություն ֆրիգանոիդ բուսականության բարձանման թփերից, ալպիական գոտու բարձերը խոտային են: Բարձանման ձեզ կախումն ունի կարճլիկ բույսի տուատ ու խիտ ճյուղավորումից և դա մի նարմարանք է հանդիսանում ժայռոտ միջավայրի ֆիզիկական ու ֆիզիոլոգիական չորության նկատմամբ:

Շատ հետաքրքրական ու բազմազան է քարացրանքների բուսականությունը: Քարացրոնքների բույսերի համար ընորոշ են՝ հզոր արմատային սիստեմը և շատ խոշոր ճիմը՝ բազմաթիվ քնձյուղներով: Բավականին յուրահատուկ բնույթ ունի նաև ալպիական քարացրոնքների բուսականությունը: Փլվածքների և քարացրոնքների հողը շատ չնշն չափով է ծածկված: Շատ երկարատև զարգացման ընթացքում փլվածքները և քարացրոնքները կարող են ճամակալել և մարգագետինների վերածվել: Այդպիսի ճամակալած փլվածքներ և քարացրոնքներ Հայաստանում աճենուրեք կան:

Ալպիական գոտու համար շատ բնորոշ է գարնանը ձյան ըծերի մոտ հանդես եկող ձյունամերձ (նիվալ) բօւսականությունը, որը մեծ մասամբ կազմված է զանազան վարդակավոր երկարքել և կոճղեսավոր բույսերից:

Ալպիական բուսականության գործնական նշանակությունը հսկայական է: Ալպիական մարգագետիններն ու գորգերը հանդիսանում են հիանալի ամառային արոտավայրեր և մեծ զեր են խաղում որպես անասնաբուծության կերի բազա:

ՑԱՆԿ

Էջ

Ներածություն	3
1. Անապահութեար	5
2. Օշինգըային կիսաանտապատ	12
3. Ֆրիգանոիդ բուսականություն	14
4. Սահաներ	18
5. Քսերոֆիլ նոսրանտառներ	23
6. Անտառներ	27
7. Սուբալպիական բուսականություն	38
8. Ալպիական բուսականություն	41

Սառապըված է ապելու 13 դեկտեմբերի 1946 թ., Վ. Տ. 12644, պատվեր 1001,  
հրատ. 353, տիրաժ 3000, 3 տպ. մամուլ, մեկ մամուլում 36,800 տպ. հիշ:

---

ՀԱՅՈՒ Գիտությունների Ակադեմիայի տպարտն, Երևան, Աբովյան 104.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0010305

ЦЕНА

16244

91648 в п. 304.